Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2021թ. ապրիլի 30-ի թիվ 108-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021թ. փետրվարի 10-ի թիվ 21-Ա որոշում
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
Հաշվեքննության առարկան	Արտակարգ իրավիճակների նախարարության 2020 թվականի պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021թ. փետրվարի 16-ից մինչև 2021թ. ապրիլի 30-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը:
Հաշվեքննության շրջանակներում իրականացված ստուգում	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թ. մարտի 19-ի թիվ 66-Ա որոշման հիման վրա ֆինանսական և համապատասխանության ստուգում է իրականացվել «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում
Ստուգման առարկան	«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ֆինանսատնտեսական գործունեություն
Ստուգումն ընդգրկող ժամանակաշրջանը	2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը
Ստուգման կատարման ժամկետը	2021թ. մարտի 22-ից մինչև 2021թ. ապրիլի 30-ը
Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի յոթերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի նախագահ Լևոն Յոլյանը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 4
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ 5
3. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 7
4. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 8
5. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 10
5.1 Աշխատանքի վարձատրություն 12
5.2 Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին 33
5.3 Գրասենյակային նյութեր և հագուստ 37
5.4 Տրանսպորտային նյութեր 45
5.5 Ներքին գործուղումներ 49
5.6 Նախարարության կարիքների համար իրականացված գնումներ 49

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՊ	Հաշվեքննիչ պալատ
ԱԻՆ	Արտակարգ իրավիճակների նախարարություն
ՓԾ	Փրկարար ծառայություն
Նախարարություն	ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն
ՀՓՋ	Հրշեջ փրկարարական ջոկատ
ՄՓՎ	Մարզային փրկարարական վարչություն
ՔՊ	Քաղաքացիական պաշտպանություն
ՀՀՀՀՀՀՍ	Հայասատանի Հանրապետության Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Ստանդարտ
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսային ծրագիր
ՀԾ	Հայկական ծրագրեր
ԹՆԱՎ	Թիկունքի և նյութական ապահովման վարչություն
ԱՎՕ	Արտադրական վտանգավոր օբյեկտ
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

Հաշվեքննությունն իրականացվել է հաշվեքննության առաջադրանքի հիման վրա՝ էականության հատուկ շեմից բարձր հետևյալ ծախսային հոդվածների համար.

- **Աշխատանքի վարձատրություն՝** ներառյալ Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ, Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ, Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում (դրամարկղային ծախս՝ 11,430,770.12 հազ. դրամ),
- **Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին** (դրամարկղային ծախս՝ 2,094,057.1 հազ. դրամ):

Վերոնշյալ հոդվածների դրամարկղային ծախսը կազմել է 13,524,827.22 հազ. դրամ, հաշվեքննության ծածկույթը՝ ծախսերի՝ 91.9 %-ը:

Հաշվեքննության ծածկույթի ավելացման նպատակով հաշվեքննության աաջադրանքում ներառվել է նաև՝

- Գրասենյակային նյութեր և հանդերձանք (դրամարկղային ծախս՝ 116,267.89 հազ. դրամ),
- Տրանսպորտային նյութեր (դրամարկղային ծախս՝ 218,920.57 հազ. դրամ)
- Ներքին գործուղումներ (դրամարկղային ծախս՝ 32,006.67 հազ. դրամ) հոդվածները:

Արդյունքում հաշվեքննության ընդհանուր ծածկույթը կազմել է 13,892,022.35 հազ.դրամ, կամ դրամարկղային ծախսի՝ 94.4%-ը):

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, ինչպես նաև բնածին և մարդածին աղետների ռիսկերի, հետևանքների նվազեցման և վերացման, իրականացման համակարգման, փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման և առաջնային, անհետաձգելի, վթարավերականգնողական աշխատանքների համակարգման, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության տարահանման գործընթացների պետական կարգավորման ու դրա իրականացման աշխատանքների համակարգման, նշված ոլորտների խնդիրները լուծելու նպատակով տեղեկատվության ստացման, ամփոփման, նշված ոլորտներում կառավարման իրականացման և համակարգման, հումանիտար արձագանքման գործողությունների իրականացման համակարգման, պետական պահուստի պաշարների պահպանման ու սպասարկման, սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման, հիդրոօդերևութաբանական երևույթների ռեժիմային ու հատուկ դիտարկումների, ուսումնասիրությունների և կանխատեսումների իրականացման ապահովման, մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության աշխատանքների համակարգման, պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության ապահովման, պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների արտադրության, առևտրի և պայթեցման աշխատանքների կատարման լիցենզիաների տրամադրման, արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրի վարման, տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնող անձանց հավատարմագրման, հաշվառման, ինչպես նաև լիցենզավորման ծառայությունների մատուցման ապահովման, արտակարգ իրավիճակների, աղետների, կոնֆլիկտների տարածքից տուժածների բուժօգնության ցուցաբերման և բուժտարահանման միջոցառումների կառավարման օպերատիվ,

կազմակերպչական և ռազմավարական հիմունքների մշակման, ՀՀ պաշտպանության կազմակերպման մասնակցության (խաղաղ ժամանակ ՀՀ պաշտպանության ապահովման ուղղությամբ քաղաքացիական պաշտպանության և փրկարարական ստորաբաժանումների ստեղծումը, զարգացումը, դրանց ծավալման և կիրառման պլանավորումը և ՀՀ վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության և ռազմական գործողությունների պայմաններում այդ ուժերի փոխադրումն անհրաժեշտ մարտական պատրաստականության վիճակի, պատերազմական ժամանակաշրջանի կազմի և կառուցվածքի) ապահովման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:

3. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՀՀ 2020թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն Նախարարությանը ընդհանուր բյուջետային թվով 10 ծրագրերի իրականացման համար նախատեսվել է հատկացնել 15,308,673.0 հազ. դրամ: ՀՀ կառավարության 26.12.2019թ. թիվ 1919-Ն որոշման համաձայն նախատեսվել է տարեկան ծախսերը նվազեցնել 328,392.1 հազ. դրամով, ինչի արդյունքում 2020թ. տարեկան ճշգրտված պլանը կազմել է 14,980,280.9 հազ. դրամ:

Ըստ ծրագրերի Նախարարության տարեկան ցուցանիշները և ծրագրերի փաստացի կատարողականը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

հազ. դրամ

Ծրագիր	Հոդված	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Դրամարկղային ծախս	Կատարման %
Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում	- Այլ նպաստներ բյուջեից	269,424.0	252,746.7	93.8
Հիդրոօդերևութաբանական ծառայություններ	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	551,519.0	551,519.0	100.0
Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	100,297.2	100,297.2	100.0
Միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ	- Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից	3,591.0	3,591.0	100.0
	- Այլ նպաստներ բյուջեից	38,701.8	38,701.8	100.0
Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավար անձնակազմի և մասնագետների վերապատրաստման կազմակերպում	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	126,283.6	126,283.6	100.0
Սեյսմիկ պաշտպանության ոլորտում ծառայությունների տրամադրում	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	952,502.9	952,502.9	100.0
Փրկարարական ծառայություններ	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	8,596,060.2	8,558,526.8	99.6
	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	1,967,555.2	1,871,275.3	95.1
	- Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	17,709.3	17,709.3	100.0
	- Էներգետիկ ծառայություններ	117,975.6	117,975.4	100.0
	- Կոմունալ ծառայություններ	12,678.1	12,150.1	95.8
	- Կապի ծառայություններ	26,594.1	26,464.0	99.5
	- Ապահովագրական ծախսեր	9,200.0	8,956.0	97.3
	- Գույքի և սարքավորումների վարձակալություն	5,963.2	5,959.2	99.9
	- Ներքին գործուղումներ	30,227.9	29,289.9	96.9
	- Համակարգային ծառայություններ	5,200.0	5,199.4	100.0
	- Տեղեկատվական ծառայություններ	725.0	661.2	91.2
	- Ներկայացուցչական ծախսեր	4,700.0	3,287.2	69.9
	Մասնագիտական ծառայություններ	781.0	-	-
	- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	848.3	810.0	95.5
	- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	49,012.6	42,969.6	87.7
	- Գրասենյակային նյութեր և հագուստ	113,082.3	112,703.2	99.7
	- Գյուղատնտեսական ապրանքներ	2,610.0	2,610.0	100.0
	- Տրանսպորտային նյութեր	203,898.2	203,755.4	99.9
	- Առողջապահական և լաբորատոր նյութեր	2,000.0	2,000.0	100.0
	- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	6,881.0	6,753.2	98.1
	- Հատուկ նպատակային այլ նյութեր	62,358.3	62,344.0	100.0
	- Կենսաթոշակի անցնելուհետ կապված և տարիքային նպաստներ բյուջեից	70,159.5	43,003.0	61.3
	- Այլ հարկեր	-	25,582.9	
ԱԻՆ փրկարար ծառայության աշխատակիցներին բուժօգնության ծառայությունների տրամադրում	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	18,707.7	12,472.4	66.7
Արտակարգ իրավիճակներում մարդասիրական աջակցության կազմակերպում	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	23,261.2	23,261.2	100.0
Օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններ գործուղված փրկարարական	- Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից	13,333.8	6,654.8	49.9

ծառայողների ուսուցման կազմակերպում				
Փրկարարական ծառայողներին և փրկարար շներին դեղորայքով ապահովում	- Առողջապահական և լաբորատոր նյութեր	934.2	934.2	100.0
	- Տրանսպորտային սարքավորումներ	12,300.0	12,300.0	100.0
	- Վարչական սարքավորումներ	900.0	900.0	100.0
ԱԻՆ փրկարար ծառայության շենքի ապահովվածության և պայմանների բարելավում	- Շենքերի և շինությունների շինարարություն	-	-	
Պետական ռեզերվների պահպանում	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	327,720.8	327,720.8	100.0
Նյութական ռեսուրսների ՀՀ պետական պահուստի ձևավորում և պահպանում	- Այլ ծախսեր	31,963.0	-	-
Ռազմավարական նշանակության պաշարների ձևավորում և կուտակում	- Ռազմավարական պաշարներ	14,617.3	-	-
Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում	- Այլ նպաստներ բյուջեից	44,909.0	44,909.0	100.0
Արտակարգ իրավիճակների բնագավառում քաղաքականության մշակում, խորհրդատվական ծառայությունների տրամադրում և մոնիտորինգի իրականացում	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	775,065.9	761,811.3	98.3
	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	158,084.0	158,084.0	100.0
	- Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	63,363.4	63,363.4	100.0
	- Էներգետիկ ծառայություններ	48,335.9	48,335.9	100.0
	- Կոմունալ ծառայություններ	3,404.4	3,054.4	89.7
	- Կապի ծառայություններ	8,648.8	7,248.8	83.8
	- Ապահովագրական ծախսեր	760.0	745.0	98.0
	- Ներքին գործուղումներ	2,892.7	2,716.8	93.9
	- Համակարգային ծառայություններ	5,676.0	4,220.0	74.3
	- Տեղեկատվական ծառայություններ	1,677.0	891.5	53.2
	- Ներկայացուցչական ծախսեր	1,500.0	1,312.3	87.5
	- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	2,300.0	2,300.0	100.0
	Մասնագիտական ծառայություններ	300.0	300.0	100.0
	- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	2,799.8	2,799.8	100.0
	- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	6,327.0	5,077.8	80.3
	- Գրասենյակային նյութեր և հագուստ	4,372.8	3,564.7	81.5
	- Տրանսպորտային նյութեր	15,274.8	15,165.1	99.3
	- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	1,230.0	893.4	72.6
	- Պարտադիր վճարներ	-	1,830.1	
Արտակարգ իրավիճակների նախարարության տեխնիկական հագեցվածության բարելավում	- Վարչական սարքավորումներ	13,657.6	12,310.5	90.1
ԸՆԴԱՄԵՆԸ		**14,980,280.9**	**14,710,268.1**	**98.2**

4. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020թ. պետական բյուջեի կատարման հաշվեքննության շրջանակներում Նախարարության կողմից բազմաթիվ դեպքերում արձանագրվել է տեղեկատվություն ընդհանրապես չտրամադրման, տրամադրման ժամկետների չպահպանման, ոչ պատշաճ և ամբողջական ծավալով տրամադրման դեպքեր: Մասնավորապես.

- **Պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության շրջանակներում** Նախարարության կողմից ՀՀ հաշվեքննիչ պալատին առ 09.06.2020թ. ներկայացված թիվ 01/03.2/3474-20 գրությամբ տեղեկացվել է, որ հաշվեքննության իրականացման ժամանակահատվածում ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչությունը նույնպես ստուգում է իրականացնում Նախարարությունում, և վերջինս հրաժարվել է տրամադրել հայցված տեղեկատվությունը:
- **Պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության շրջանակներում** Հաշվեքննիչ պալատը 13.08.2020թ. թիվ ՀՊԵ-347 գրությամբ դիմել էր Նախարարությանը՝ հայցելով տրամադրել հաշվեքննության համար անհրաժեշտ տեղեկատվություն, որի վերաբերյալ պատասխան գրությունը ստացվել է 23.09.2020թ.: Արդյունքում, Նախարարության կողմից չի պահպանվել «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ տեղեկատվությունը չի տրամադրվել նշված հոդվածով սահմանված ժամկետում: Հայցվող տեղեկատվության մի մասը Նախարարության կողմից տրամադրվել է էլեկտրոնային

եղանակով, որը եղել է ոչ ամբողջական, դասակարգված չի եղել ըստ հարցման ձևաչափի (էջերի կամ բաժինների), իսկ մի մասի վերաբերյալ էլ (ՀԻՄՆԱՐԿԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ՝ ԸՍՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ և ՊԱՍԻՎՆԵՐԻ (Ձև Հ-7, 31.12.2019թ. դրությամբ, 2020թ. առաջին կիսամյակի հաշվետվություն՝ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԳԾՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (Ձև Հ-8), գույքագրման արդյունքների հիման վրա կազմված եզրափակիչ ակտ և այլն) տեղեկատվություն ընդհանրապես չի տրամադրվել:

- **Պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության շրջանակներում** Հաշվեքննիչ պալատը 17.12.2020թ. թիվ ՀՊԵ-549 գրությամբ դիմել էր Նախարարությանը՝ հայցելով տրամադրել հաշվեքննության համար անհրաժեշտ տեղեկատվություն, որի վերաբերյալ պատասխան գրությունը ստացվել է 28.12.2020թ. թիվ 01/7574-20 գրությամբ: Նախարարությունն, այս դեպքում, հրաժարվել է հայցվող տեղեկատվությունը տրամադրել ամբողջական ծավալով՝ պատճառաբանելով տարեվերջյան ծանրաբեռնվածությունը, մինչդեռ հայցվող տեղեկատվության գերակշիռ մասը պատրաստի փաստաթղթեր (հաշվետվություններ) կամ ցուցանիշներ են (օրինակ՝ գույքագրման արդյունքները և դրանց հիման վրա կազմված եզրափակիչ ակտը և այլն), որոնց տրամադրումը լրացուցիչ որևէ ռեսուրս չէր պահանջում: Ավելին՝ գրությամբ Նախարարությունն առաջարկել է որոշ հաշվետվությունների (ՀԻՄՆԱՐԿԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ՝ ԸՍՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ և ՊԱՍԻՎՆԵՐԻ (Ձև Հ-7, 31.12.2019թ. դրությամբ), ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՍԻՆ (Ձև Հ-2), ՀԻՄՆԱՐԿԻ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ, ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Ձև Հ-4), ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԳԾՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (Ձև Հ-8)) հասանելիությունն ապահովել տեղում՝ LS Finance ծրագրի միջոցով, որը հաշվեքննության կատարման ընթացքում չի ապահովել:
- **Պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության շրջանակներում** անհրաժեշտ հաշվետվություններն Նախարարությունն ապահովել է LS Finance ծրագրի միջոցով: Տեղեկատվության հիմնական մասը տամադրվել է սահմանված ժամկետում և ծավալով, սակայն, այդպես էլ չի տրամադրվել 2019թ. գույքագրման արդյունքները և դրա հիման վրա կազմված եզրափակիչ ակտը:

Եզրահանգում: Նախարարության կողմից չի պահպանվել «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, և հայցվող տեղեկատվությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամանակահատվածում ամբողջ ծավալով չի տրամադրվել:

5. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի տվյալների, 2020թ. Նախարարության փաստացի ծախսը կազմել է 14,667,671.14 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 14,710,268.08 հազ. դրամ:

Դրամարկղային և փաստացի ծախսերի տարբերությունը հիմնականում պայմանավորված է տարեսկզբին աշխատանքի վարձատրություն հոդվածի գծով ունեցած 12,202.3 հազ. դրամ կրեդիտորական պարտքի մարմամբ:

Հաշվետվության մաթեմատիկական ճշգրտությունը ստուգելու համար կիրառվել է ճշգրտության ստուգման ընթացակարգը, որի շրջանակներում կատարվել է ծրագրերի ծախսային ընդհանուր ցուցանիշների և գործառնությունների հանրագումարի համադրում, ինչի արդյունքում պարզվել է, որ ծրագրերի համար իրականացված ծախսերի ցուցանիշը համապատասխանում է առանձին հոդվածների ցուցանիշների հանրագումարին:

Նախարարությունը գանձապետական հաշվի շարժը կառավարել է LS Finance ծրագրային փաթեթի միջոցով, իսկ հաշվապահական հաշվառումը վարել է ՀԾ ծրագրային փաթեթի միջոցով, ինչը նշանակում է LS Finance հարթակում Նախարարության գանձապետական հաշվի շարժը ամբողջությամբ պետք է արտացոլվեր նաև ՀԾ-ում, որն էլ հիմք հանդիսանար հաշվետվությունները կազմելու համար:

Հաշվապահական հաշվառման ՀԾ փաթեթը ներդրվել է ոչ լիարժեք, իսկ գործընթացում արձանագրվել է էական ռիսկեր

Հաշվեքննության ընթացքում արձանագրվել է, որ Նախարարության (այդ թվում ՓԾ) հաշվապահական հաշվառման գործընթացում ՀԾ փաթեթը դեռևս լիարժեք հաշվապահություն վարելու հիմք չի հանդիսացել: Ավելին, LS Finance հարթակում հաշվետվությունների կազմման ժամանակ մի շարք գործողություններ իրականացվել են ձեռքի աշխատանքով, որը ոչ միայն աշխատատար և ժամանակատար է, այլև խեղաթյուրումների և անհամապատասխանությունների էական ռիսկեր կարող է պարունակել: Մասնավորապես, աշխատանքի վարձատրության գործընթացն իրականացվել է Excell ծրագրային փաթեթի միջոցով, որից հետո վերջնական ընդհանուր թիվը մուտքագրվել է ՀԾ տվյալների բազա և ծախսագրվել ամբողջական թվով, վառելիքի ծախսագրումը իրականացվել է ոչ թե փաստացի ուղեգրերի հիման վրա, այլ՝ յուրաքանչյուր ամսվա վառելիքի բաշխման թվերի համապատասխան:

Հաշվետվությունների կազմման գործընթացում առկա վերոնշյալ խնդիրների արդյունքում LS Finance հարթակում և ՀԾ ծրագրային փաթեթում ամփոփ ցուցանիշները տարբերվել են միմյանցից, հիմնականում համադրելի չեն եղել, ինչը ոչ միայն հաշվետվությունների կազմման գործընթացը դարձրել է ավելի աշխատատար, ժամանակատար, պարունակել է էական ռիսկեր, այլ՝ հնարավորություն չի տվել կիրառել այն որպես ներքին հսկողական համակարգ:

Դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի տվյալների, Նախարարության դեբիտորական պարտքը 01.01.2020թ. կազմել է 388,353.0 հազ. դրամ, ընդ որում՝ 200,603.63 հազ. դրամը նախորդ տարվա բյուջեից: 31.12.2020թ. դրությամբ դեբիտորական ընդհանուր պարտքերը կազմել են 349,415.31 հազ. դրամ, որից 252,331.47 հազ. դրամը՝ նախորդ տարվա բյուջեից:

Դեբիտորական պարտքերը հիմնականում ձևավորվել են Փրկարար ծառայության պահուստավորված միջոցների հաշվին, մասնավորապես՝ 2020թ. արդյունքներով դեբիտորական պարտք ներառել են՝ «Պահեստավորված գրասենյակային նյութեր և հագուստ (89,484.55 հազ. դրամ)», «Պահեստավորված տրանսպորտային նյութեր (137,687.78 հազ. դրամ)» և «Պահեստավորված հատուկ նպատակային այլ նյութեր (35,488.18 հազ. դրամ)» հոդվածները:

Կրեդիտորական պարտքերը 01.01.2020թ. կազմել են 56,037.72 հազ. դրամ և ամբողջապես ձևավորվել 2019թ. բյուջեից, 2020թ. դրանք աճել են՝ կազմելով 65,168.62 հազ. դրամ:

Միևույն ժամանակ, Նախարարության դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին հաշվետվության մեջ առանձին տողով ներկայացվել է նախորդ տարիներից եկած դեբիտորական և կրեդիտորական պարտքի մնացորդները, որոնք որևէ բազայում կամ ռեգիստրում գրանցված չեն եղել, իսկ յուրաքանչյուր տարի հաշվետվության կազմման ժամանակ համակարգի մեջ մուտքագրվել են ձեռքով և հնարավոր չի եղել գնահատել դրանց արժանահավատությունը: Այդ մնացորդները վերջին տարիներին որևէ փոփոխության չեն ենթարկվել, Նախարարության կողմից չեն ձեռնարկվել միջոցներ դրանց մարման կամ անհուսալի ճանաչման հիմքով դուրսգրման համար, որոշ դեպքերում էլ անգամ հայտնի չեն դրանց մասով գործընկերների տվյալները:

31.12.2020թ. դրությամբ նախորդ տարիներից եկած դեբիտորական պարտքի մնացորդը կազմել է 797.8 հազ դրամ, իսկ կրեդիտորական պարտքը՝ 3354.4 հազ. դրամ:

Հաշվետվության մեջ չի արտացոլվել ՊԵԿ միասնական հաշվին առկա 5,275. 6 հազ. դրամ գերավճարը

Նախարարությունը 30.12.2020թ. դրությամբ ՊԵԿ միասնական հաշվին ունեցել է 5,275.6 հազ. դրամ գերավճար (ընդ որում՝ 01.01.2020թ. մնացորդը եղել է զրոյական), որը կրեդիտորական պարտքերի մասին հաշվետվության մեջ ևս չի արտացոլվել: Արդյունքում, չի պահպանվել ՀՀ կառավարության 15.06.2018թ. թիվ 706-Ն որոշման պահանջները: Արձանագրվել է նաև մի շարք խնդիրներ՝ մաշվածության հաշվարկման և ծախսագրման գործընթացում: Մասնավորապես՝ ՀԾ փաթեթում ներառվել են միայն 2018թ.-ից հետո ձեռք բերված հիմնական միջոցները, և միայն դրանց համար է մաշվածությունը հաշվարկվել ծրագրի միջոցով, իսկ սկսած 2018թ-ից հին հիմնական միջոցների մաշվածության հաշվարկը իրականացվել է ասառանձին Excell ֆայլի միջոցով, և միայն հաշվետվության կազմման ժամանակ այս հարթակների ցուցանիշները միացվել են իրար և ներառվել հաշվետվության մեջ: Միևնույն ժամանակ, քանի որ հաշվեքննության ընթացքում Նախարարության կողմից չի տրամադրվել իրականացված գույքագրման արդյունքները, ուստի հնարավոր չի եղել ձեռք բերել բավարար ապացույցներ մաշվածության

գնահատման և հաշվետվության մեջ ներկայացված ցուցանիշների արժանահավատության վերաբերյալ:

Ծրագրերի միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշներ: Նախարարության կողմից իրականացվող բյուջետային 10 ծրագրերի համար սահմանվել են ընդհանուր թվով 165 արդյունքային ցուցանիշներ, ընդ որում՝ «Ռազմավարական նշանակության պաշարների կառավարում» և ծրագրի գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշներ չեն սահմանվել:

5.1 Աշխատանքի վարձատրություն

(411100-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ, 411200-Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ, 411300-Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում)

Նախարարության աշխատակազմին (ներառյալ՝ փրկարար ծառայությունը) պետական բյուջեից աշխատանքի վարձատրության համար 2020թ. ճշգրտված պլանով նախատեսվել է հատկացնել 11,577,838.0 հազ. դրամ:

Նախարարության աշխատակազմի 2020թ. ճշգրտված պլանը կազմել է 996,513.3 հազ. դրամ, իսկ 31.12.2020թ. դրությամբ դրամարկղային ծախսը՝ 983,258.7 հազ. դրամ:

Փրկարար ծառայության աշխատակիցներին աշխատանքի վարձատրության ծախսերի համար 2020թ. ճշգրտված պլանով նախատեսվել է հատկացնել 10,581,324.7 հազ. դրամ (3544 հաստիքային միավոր), դրամարկղային ծախսը կազմել է 10,447,511.4 հազ. դրամ:

Աղյուսակ 2.

հազ. դրամ

Ծրագիր	Հոդված	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Դրամարկղային ծախս	Կատարման %
Փրկարարական ծառայություններ	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	8596060.2	8558526.83	99.6
	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	1967555.2	1871275.25	95.1
	- Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	17709.3	17709.3	100.0
Արտակարգ իրավիճակների բնագավառում քաղաքականության մշակում, խորհրդատվական ծառայությունների տրամադրում և մոնիտորինգի իրականացում	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	775065.9	761811.34	98.3
	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	158084	158084	100.0
	- Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	63363.4	63363.4	100.0

Հաշվեքննիչ պալատի կողմից Նախարարությունում 2020թ. պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների նկատմամբ իրականացված հաշվեքննության հետիսկողական գործընթացի վերաբերյալ.

- ***Արձանագրված անհամապատասխանությունը:*** Փրկարար ծառայողների արձակուրդի տրամադրման փաստացի գործընթացը չի իրականացվել ԱԻ նախարարի 11.02.2013թ. թիվ 224 հրամանի պահանջներին համապատասխան, ինչպես նաև հակասում է ՀՀ աշխատանքային

օրենսգրքի պահանջներին: Չի պահպանվել նաև փրկարար ծառայողների արձակուրդային վճարների հաշվարկման և տրամադրման կարգը:

ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 712-Ն որոշման 1-ին կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ սահմանվել է փրկարար ծառայության առանձնահատկությունների համար տրվող հավելումների հաշվարկման մեծությունների չափը, ըստ պաշտոնների դասակարգման խմբերի: ՀՀ կառավարության 26.09.2019թ. թիվ 1278-Ն որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում մարմնի ղեկավարը պետք է հաստատի որոշմամբ սահմանված ծառայության առանձնահատուկ պայմանների հաշվառման և փաստաթղթավորման կարգը:

Նախարարության, այդ թվում՝ փրկարար ծառայության, աշխատանքի վարձատրության համար հաշվարկները կատարվել են Excell ծրագրի միջոցով, որտեղ յուրաքանչյուր ամիս ֆինանսատնտեսագիտական վարչության աշխատակիցները մուտքագրել են ստաժի, հաշվարկային գործակցի և այլ փոփոխականների վերաբերյալ տվյալներ: Աշխատավարձերի հաշվարկման ավտոմատացված համակարգ դեռևս ներդրված չի եղել, ինչը հաշվառման ճշգրտության էական ռիսկեր է պարունակել, հաշվի առնելով նաև համակարգի աշխատակիցների մեծ թիվը:

Հետիսկողական գործընթացի արդյունքները: *2020թ. պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության շրջանակներում արձանագրվել է, որ թեև Փրկարար ծառայողների արձակուրդի տրամադրման գործընթացը իրականացվել է հրամանի հիման վրա, սակայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջներին համապատասխան արձակուրդային վճարների հաշվարկ և վճարում չի իրականացվել:*

Ծառայության առանձնահատուկ պայմանների հաշվառման և փաստաթղթավորման նշված կարգը հաշվեքննության կատարման ընթացքում դեռևս Նախարարության կողմից չի հաստատվել, ինչի հետևանքով ծառայության առանձնահատուկ պայմանների հաշվառման և փաստաթղթավորման գործընթացը լիարժեք չի իրականացվել: Ավելին, 2020թ. Նախարարությունը կարգի բացակայության պայմաններում շարունակել է իրականացնել վճարումներ:

Չնայած Նախարարության կողմից տրամադրված պարզաբանումներին, որ քայլեր են ձեռնարկվել աշխատավարձի հաշվարկման համար ՀԾ Ձեռնարկություն համակարգի ներդրման համար, 2020թ. պետական բյուջեի կատարման հաշվեքննության շրջանակներում արձանագրվել է, որ վերոնշյալ ծրագրային փաթեթը դեռևս ներդրված չի եղել, և աշխատանքի վարձատրության հաշվառման ճշգրտության ռիսկերը շարունակել են մնալ բարձր:

ԱԻՆ դիրքորոշում: *«Փրկարարական ծառայողների արձակուրդների տրման կարգը սահմանելու» և ԱԻ նախարարի 2013թ. մարտի 11-ի «Փրկարարական ծառայողների հերթական (ամենամյա) արձակուրդի տրման կարգը սահմանելու մասին» թիվ 224-Ս հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱԻ նախարարի 22.01.2021թ. թիվ 63-Լ հրամանով հարցը կարգավորվել է: Հրամանն ուժի մեջ է մտել 01.03.2021թ-ից: ԱԻ նախարարի 01.03.2021թ թիվ 221-Լ հրամանով հաստատվել է ծառայության առանձնահատուկ պայմանների հաշվառման և փաստաթղթավորման կարգը:*

Հաշվեքննողի արձագանք: *Ընդունվել է ի գիտություն, սակայն հաշվի առնելով այն, որ հրամանի ընդունումը եղել է հաշվեքննության ավարտից հետո, հաշվեքննության արդյունքները որևէ փոփոխության չեն ենթարկվել:*

<u>Եզրահանգում: Նախարարության կողմից չի պահպանվել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ե) ենթակետի, 22-րդ հոդվածի 9-րդ մասի, «Փրկարար ծառայության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-19-Ն օրենքի 4-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 712 որոշման պահանջները, մի շարք դեպքերում սխալ է հաշվարկվել «Պետական պաշտոններ և պետական ծառայության</u>

պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածով սահմանված դրույքաչափերը:

2020թ. պետական բյուջեի ճշտված պլանով աշխատավարձեր և դրան հավասարեցված վճարներ աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ հոդվածով նախատեսվել է 8,596.060.2 հազ.դրամ (փաստացի ծախսը կազմել է 8,549.543.13 հազ.դրամ, կամ ճշտված պլանի 99.45 %-ը), պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ հոդվածով՝ 1,967.555.2 հազ.դրամ (փաստացի ծախսը՝ 1,871.275.25 հազ.դրամ, կամ 95.1%), քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում հոդվածով՝ 17,709.3 հազ.դրամ (փաստացի ծախսը՝ 17.709.3, կամ 100%):

ԱԻՆ աշխատակազմին «Արտակարգ իրավիճակների բնագավառի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրի իրականացման համար 2020թ. պետական բյուջեով նախատեսված 1,110,092.5 հազ.դրամից 996,513.3 հազ.դրամը, կամ 89,7%-ը նախատեսվել է Նախարարության ապարատի 240 հաստիքային միավորի աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների համար:

ՀՀ Վարչապետի 26.11.2019թ. թիվ 1757-Ա որոշման 1-ին կետի համաձայն, 2020թ. մարտի 1-ից ՀՀ վարչապետի 11.06.2018թ. «Պետական իշխանության մարմիններում հաստիքների առավելագույն թիվը սահմանելու մասին» թիվ 706-Ա որոշման 1-ին հավելվածի 4-րդ կետով սահմանված 240 հաստիքային միավորի փոխարեն սահմանվել է 229-ը:

ՀՀ կառավարության 26.11.2019թ. թիվ 1758-Լ որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն դադարեցվել է Նախարարության կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող ներքին աուդիտի վարչության գործունեությունը (որոշումն ուժի մեջ է մտել 2020թ. մարտի 1-ից): ԱԻ նախարարը 24.02.2020թ. թիվ 268 հրամանի համաձայն լուծարել է թվով 11 քաղաքացիական ծառայողից բաղկացած վարչությունը:

2020թ. ներքին աուդիտի վարչության թվով 11 հաստիքային միավորի տարեկան աշխատավարձի ֆոնդը կազմել է 40,776,9 հազ.դրամ, այդ թվում՝ «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով՝ 31,715.5 հազ. դրամ, «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով՝ 6,468.7 հազ. դրամ և «Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում» հոդվածով՝ 2,592,7 հազ. դրամ:

Ներքին աուդիտի վարչության աշխատավարձի փաստացի ծախսը 2020թ. կազմել է 9,255.7 հազ. դրամ, որից՝ 1,224.9 հազ. դրամ պարգևավճար: Ներքին աուդիտի վարչության լուծարման հետևանքով նախատեսված և չծախսված 31,521.2 հազ. դրամը ԱԻՆ-ը պետք է ուղղեր արտաքին աուդիտորական ընկերություն ներգրավելուն, որը չի իրականացրել:

Ներգրավված փորձագետների վճարման հետ կապված խնդիրներ

ԱԻՆ-ը լուծարված ներքին աուդիտի վարչության թվով 11 հաստիքների համար նախատեսված 31,521.2 հազ. դրամը համարելով աշխատավարձի ֆոնդի տնտեսում և

հիմք ընդունելով ՀՀ կառավարության 02.08.2016թ. «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը հաստատելու մասին» թիվ 878-Ն որոշմամբ հաստատված կարգը, 2020թ. Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներում պայմանագրային հիմունքներով ընդունել է փորձագետներ, չպահպանելով վերոնշյալ կարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 14-րդ կետերի (14-րդ կետը վերախմբագրվել է 2020թ. հուլիսի 1-ին) պահանջները: Նախարարությունն այդ փորձագետներին վճարել է աշխատավարձ և պարգևավճար ճիշտ այնքան, որքան կազմել է լուծարված վարչության թվով 11 հաստիքների համար նախատեսված աշխատավարձը և պարգևավճարները (31,521.2 հազ.դրամ):

Աղյուսակ 3

Պայմանագրային աշխատողների աշխատավարձի և պարգևավճարների վճարումներն ըստ ամիսների

հ/հ	ամիս	Պայմանագրերի		Փաստացի վճարված		
		թիվը	գինը հազ.դրամ	Պայմանագրերի թիվը	աշխատավարձ հազ.դրամ	Այդ թվում պարգևավճար հազ. դրամ
1	հունվար	7	1,370.6	6	1,317,1	
2	փետրվար	8	1,525,6	7	2,556.2	1,331.6
3	մարտ	11	2,071.7	10	2,573,5	480.7
4	ապրիլ	11	2,071.7	10	2,181,6	270.0
5	մայիս	11	2,071.7	10	2,232.3	502,3
6	հունիս	12	2,284.0	11	2,408.9	340,0
7	հուլիս	14	2,807.2	13	2,458.5	320,0
8	օգոստոս	14	3,019.5	13	3,163.3	590,0
9	սեպտեմբեր	11	2,273.2	11	4,486.1	2,060.9
10	հոկտեմբեր	10	2,060.9	10	2,534.4	390,0
11	նոյեմբեր	10	2,060.9	10	2,254.1	170,0
12	դեկտեմբեր	10	2,060.9	10	2,967,0	890,0
	Ընդամենը		25,677.9		31,132.9	7,345.5

ՀՀ կառավարության 02.08.2016թ «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը հաստատելու մասին» թիվ 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի համաձայն՝ փորձագետների առավելագույն թիվը չի կարող գերազանցել ընդհանուր հաստիքների թվի 5%-ը, որը ԱԻՆ-ի դեպքում կազմել է 12 պայմանագիր: Սակայն, Նախարարությունը համաձայն աշխատավարձի հաշվարկման տեղեկագրերի հուլիս և օգոստոս ամիսներին վճարել է 13 պայմանագրային աշխատողների:

2020թ. հուլիս-դեկտեմբեր ամիսներին կատարվել է 4,420.9 հազ. դրամ ավելի վճարում՝ պարգևավճարի տեսքով

Վերոնշյալ Կարգի 14-րդ կետի համաձայն վարձատրությունն իրականացվում է համապատասխան մարմնի տնտեսված միջոցներից, ինչպես նաև Օրենքով չարգելված

միջոցներից: 2020թ հուլիսի 1-ից փորձագետի համար հավելավճարներ, պարգևատրումներ, լրավճարներ չեն սահմանվել՝ բացառությամբ սույն կարգի 3-րդ կետով փորձագետ ներգրավելու դեպքի: Հուլիս-դեկտեմբեր ամիսներին վճարվել է 4,420.9 հազ. դրամ: Ընդ որում, Նախարարության տարբեր ստորաբաժանումներում, ընդունվել են փորձագետներ, որոնց անհրաժեշտությունը, վերոնշյալ Կարգի 2-րդ կետի համաձայն, չի հիմնավորվել, նրանց գործառույթներն ամբողջությամբ վերապահված է եղել տվյալ ստորաբաժանմանը, որտեղ նրանք ներգավվել են:

Աղյուսակ 4.

	ստորաբաժանում	Ստորաբաժանման աշխատողների թիվը	Փորձագետներ ի թիվը	Մեկ միավորի Սահմանված դրույքաչափ դրամ
1	**Շենք շինությունների պահպանման և տնտեսական վարչություն**			
	գնումների կազմակերպման բաժին	4	2	212309
				278000
	Տնտեսական բաժին	27	1	125666
2	**ԱԻ քաղաքականության մշակման և միջազգային համագործակցության վարչություն**	16	2	256623
			1	310858
3	**Քարտուղարություն**			
	գործավարության կազմակերպման և արխիվային գործերի վարման բաժին	5	1	212309
	Նամակագրության բաժին	4	1	111115
	Հրդեհային և տեխնիկական անվտանգության հետաքննության վարչություն	47	2	175932
				212309
4	**Ֆինանսատնտեսագիտական վարչություն**			
	սոցիալական ապահովման հարցերի բաժին	4	1	212309
	հաշվառման բաժին	6	1	212309
5	**Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն**	6	1	212309
6	**Պետական ռեզերվների գործակալություն**	6	1	150799

Կարգի 3-րդ կետը սահմանում է նաև փորձագետ ներգրավելու ժամանակահատվածը, տվյալ դեպքում՝ մինչև մեկ տարի: Փորձագետի հիմնական աշխատավարձը սահմանվում է այդ գործառույթն իրականացնող քաղաքացիական ծառայողի հիմնական աշխատավարձի նվազագույնի չափով (քաղաքացիական ծառայողի պաշտոնի ենթախմբին համապատասխանող սանդղակի նվազագույն գործակցի և բազային աշխատավարձի արտադրյալ): ԱԻՆ-ը չի պահպանել սահմանված պահանջը՝ որոշ փորձագետների պաշտոնային դրույքաչափը սահմանվածից եղել է ավելի բարձր: Մասնավորապես՝

- Թվով 6 պայմանագրային աշխատողի պաշտոնային դրույքաչափի բազմապատիկ գործակիցը սահմանել է քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 5-րդ մակարդակի նվազագույն դրույքաչափը՝ 3.21,
- Թվով 2-ինը՝ ղեկավար պաշտոնների 4-րդ մակարդակը՝ 3.88,
- Թվով 1-ինը՝ ղեկավար պաշտոնների 3-րդ մակարդակը՝ 4.70,
- Թվով 1-ինը՝ 4.20 գործակից, որը չի կարգավորվում քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների ենթախմբի նվազագույն մակարդակներով:

Համաձայն ՀՀ վարչապետի 11.06.2018թ. թիվ 706-Ա որոշման՝ Նախարարության համար սահմանվել է 3773 հաստիքային միավոր, որից 229–ը՝ նախարարության աշխատակազմում, իսկ 3544-ը՝ փրկարար ծառայությունում:

Հաշվի առնելով այն, որ բոլոր հաստիքային միավորների աշխատավարձի հաշվարկը կատարվել է ֆինանսատնտեսագիտական վարչության կողմից, ուստի թվով 3773 հաստիքային միավորը դիտարկվել է որպես մեկ բազմություն, գործող ստանդարտի համաձայն ընտրվել է դրանցից թվով 98-ը, որից 12-ը՝ նախարարության աշխատակազմի, իսկ 86-ը՝ փրկարար ծառայության աշխատակիցներ են:

ԱԻՆ դիրքորոշում: *ԱԻՆ-ի կառուցվածքային ստորաբաժանումներում ներգրավվել են փորձագետներ՝ պահպանելով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018թ. օգոստոսի 2-ի թիվ 878-Ն «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» որոշմամբ հաստատված պահանջները, այն է.*

«2.Փորձագետները պետական մարմնի կողմից կարող են ներգրավվել տվյալ մարմնին վերապահված գործունեության ոլորտում որոշակի ծրագրերի, ինչպես նաև կանոնադրական խնդիրներից բխող որոշակի ժամկետով ծրագրերի կամ կոնկրետ հանձնարարականների իրականացման կամ պետական մարմնի կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ գործառույթի իրականացման ծավալների կտրուկ ավելացման դեպքերում:»,

«3. Պետական մարմնի կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ գործառույթի իրականացման ծավալների կտրուկ ավելացման դեպքում փորձագետ ներգրավվում է մինչև մեկ տարի ժամանակահատվածով, ընդ որում, տվյալ դեպքում փորձագետի հիմնական աշխատավարձը սահմանվում է այդ գործառույթն իրականացնող քաղաքացիական ծառայողի հիմնական աշխատավարձի նվազագույն չափով (քաղաքացիական ծառայողի պաշտոնի ենթախմբին համապատասխանող սանդղակի նվազագույն գործակցի և բազային աշխատավարձի արտադրյալ):»:

Սահմանված պաշտոնային դրույքաչափի ավելի բարձր սահմանելու մասով. Արձանագրության մեջ նշվել է, որ

«....քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 5-րդ մակարդակի նվազագույն դրույքաչափը 3.21 գործակից», նշված գործակիցը նույնն է ինչ քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 2-րդ խմբի 1-ին մակարդակի գործակիցը, ...ղեկավար պաշտոնների 4-րդ մակարդակը՝ 3.88 գործակից»՝ նշված գործակիցը նույնն է ինչ քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 1-ին ենթախմբի 1-ին մակարդակի գործակիցը,

4.20 գործակից, որը չի կարգավորվում քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների ենթախմբի նվազագույն մակարդակներով» ԱԻՆ-ում նշված գործակցով որևէ փորձագետ ներգրավված չէ:

Համաձայն ՀՀ վարչապետի 2018թ. հունիսի 11-ի թիվ 706-Ա որոշման հավելված 1-ի Նախարարության աշխատողների առավելագույն թիվը սահմանվել է 240 հաստիքային միավոր, իսկ կատարված փոփոխություններով պայմանավորված այդ թիվը փոխարինվել է 591-ով, ուստի Արձանագրության մեջ մատնանշված կարգի 4-րդ կետը՝ «4. Փորձագետների առավելագույն թիվը չի կարող գերազանցել ՀՀ վարչապետի որոշմամբ տվյալ մարմնին հատկացված հաստիքների առավելագույն քանակի 5 տոկոսը:» ևս պահպանվել է:

Հաշվեքննողի արձագանք: *Չի ընդունվել, քանի որ Նախարարությունում պետական մարմնի կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ գործառույթի իրականացման ծավալների կտրուկ ավելացման դեպքեր չի արձանագրվել:*

Չի ընդունվել նաև 4.20 գործակցով փորձագետ ներգրավված չլինելու վերաբերյալ դիրքորոշումը, քանի որ հաշվեքննությամբ արձանագրվել է որ Շենք շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի հաշվառման մասնագետ Ղ.Գ.-ի համար դրույքաչափը սահմանվել է 4.20 (Ղ.Գ.-ն աշխատանքից ազատվել է սեպտեմբեր ամսին): Ինչ վերաբերվում է ՀՀ վարչապետի 2018թ. հունիսի 11-ի թիվ 706-Ա որոշմամբ կատարված փոփոխություններով պայմանավորված հաստիքացուցակի ավելացմանը, ապա Նախարարության հաստիքների թիվը 591 դարձել է սեպտեմբեր ամսին, մինչդեռ անհամապատասխանությունը արձանագրվել է հուլիս-օգոստոս ամիսների համար:

- **Նախարարության աշխատակազմ**

Վիճակագրական ընտրանքի միջոցով Նախարարության աշխատակազմից ընտրված թվով 12 աշխատակիցների անձնական գործերի և աշխատավարձի հաշվարկման տեղեկագրերի հաշվեքննության ընթացքում արձանագրվել է.

<u>Գործակցի անհամապատասխանության հետևանքով պակաս և ավելի վճարումներ</u>

Պաշտոնային դրույքաչափի ոչ ճիշտ գործակիցների սահմանման հետևանքով արձանագրվել է 727.8 հազ.դրամի չափով խեղաթյուրում

- Ֆինանսատնտեսագիտական վարչության պետ Դ.Ա. Նախարարությունում աշխատանքի է ընդունվել 2019թ. փետրվարի 15-ին, մինչ աշխատանքի ընդունվելը, վերջինս 2017թ. սեպտեմբերի 11-ից մինչև 2019թ. հունվարի 29-ը աշխատել է անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում որպես աշխատակազմի սպասարկման մեթոդաբանության և համակարգման վարչության պետ: «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական ծառայության հավասար պաշտոնում պետական ծառայողի անընդմեջ աշխատանքի համար սահմանվում է հիմնական աշխատավարձի՝ պաշտոնային դրույքաչափի բնականոն աճ աշխատավարձի համապատասխան սանդղակի պաշտոնային դրույքաչափի նվազագույն մեծությունից առավելագույնը, եթե պետական ծառայողի հավասար պաշտոնում աշխատանքի ընդմիջումը չի գերազանցում վեց ամիսը:

  Դ.Ա. մինչև ԱԻՆ ֆինանսատնտեսագիտական վարչութան պետի պաշտոնում նշանակվելն ունեցել է 1 տարի 5 ամսվա ստաժ և նրա պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցն ըստ Օրենքի՝ 2020թ. հունվարի 1-ի դրությամբ պետք է կազմեր 4.86, իսկ 2020թ. հոկտեմբերի 1-ից՝ 5.01: Նախարարությունը չի պահպանել Օրենքի 20-րդ հոդվածի պահանջը, Դ.Ա-ի դրույքաչափը սահմանել է պաշտոնային դրույքաչափի հաշվարկման նվազագույնը՝ 4.70: Արդյունքում, 2020թ. հունվար և փետրվար ամիսների համար պակաս է սահմանել 0.16, իսկ հոկտեմբեր և դեկտեմբեր ամիսներին՝ 0.31 գործակցով, ինչի հետևանքով 2020թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին Դ.Ա. պակաս է վճարվել 82678 դրամ:
- Հրդեհային և տեխնիկական անվտանգության հետաքննության վարչության գլխավոր մասնագետ-հետաքննիչ Լ.Կ. աշխատանքի է ընդունվել 2019թ. օգոստոսի 19-ին: Ֆինանսատնտեսագիտական վարչությունն Օրենքով սահմանված կարգով պաշտոնային դրույքաչափը սահմանել է 3,21 գործակից: 2020թ. սեպտեմբեր ամսին վերջինիս գործակիցը պետք է փոխվեր և դառնար 3.31, ինչը չի կատարվել, շարունակել է մինչև դեկտեմբեր ամիսը վճարվել 3.21 գործակցով: Արդյունքում սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին պակաս է վճարվել 19842 դրամ: 2020թ. դեկտեմբեր ամսին կատարվել է գործակցի ճշտում և այդ ամսին էլ վճարվել է վերոնշյալ ամիսներին պակաս վճարված գումարը:
- Ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ Գ.Ե. 27.01.2017թ. թիվ 58-Ա հրամանով նշանակվել է ֆինանսատնտեսագիտական վարչության պետի

տեղակալ, վերջինիս քաղաքացիական ծառայության ստաժը հաշվարկել է 2016թ-ից, նրա պաշտոնային դրույքաչափը հունվար ամսին սահմանվել է 4.41, փետրվարի 1-ից՝ 4.55, մինչդեռ, համաձայն օրենսդրական պահանջի պետք է 2020թ. հունվարի 1-ի դրությամբ կազմեր 4.14, իսկ փետրվարի 1-ից՝ 4.27 գործակից: 2020թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին Գ.Ե.-ին վճարվել է 310725 դրամ ավելի աշխատավարձ:

ԱԻՆ դիրքորոշում: *27.10.2016-27.01.2017թթ Գ.Ե.-ի պաշտոնային դրույքաչափը հաշվարկվել է տվյալ պաշտոնի ենթախմբի համար նախատեսված նվազագույն 3.88 գործակցով: Գ. Ե. աշխատանքային ստաժի դադար տեղի չի ունեցել, մրցույթով համապատասխան պաշտոնի նշանակվելուց հետո աշխատավարձի գործակիցը հաշվարկվել է աշխատանքային ստաժին համապատասխան:*

Հաշվեքննողի արձագանք: *Չի ընդունվել, քանի որ հաշվեքննությամբ արձանագրվել է որ Գ.Ե.-ի պաշտոնային դրույքաչափը հունվար ամսին սահմանվել է 4.41, փետրվարի 1-ից՝ 4.55 գործակից:*

- Ա.Խ. 03.05.2011թ.-ից աշխատել է Նախարարության իրավաբանական վարչության իրավական ակտերի մշակման և փորձաքննության բաժնում որպես գլխավոր մասնագետ: 2020թ. հունվարի 1-ի դրությամբ Ա.Խ.-ի պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցը հունվար-մայիս ամիսներին պետք է սահմանվեր 3.76, իսկ հունիս-դեկտեմբեր ամիսներին՝ 3.88 գործակից: Սակայն, վերջինիս պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցը սահմանել է 4.13, հունվար-մայիս ամիսներին ավելի է սահմանել 0.37, հունիս-դեկտեմբեր ամիսներին՝ 0.25 գործակցով: 2020թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին Ա.Խ.-ին վճարվել է 314629 դրամ ավելի աշխատավարձ:

ԱԻՆ դիրքորոշում: *Ա.Խ.-ի աշխատանքային ստաժը ռեզերվում գտնվելու ընթացքում չի ընդհատվել: Այդ պատճառով Ա.Խ.-ի աշխատավարձի գործակիցը հաշվարկվել է աշխատանքային ստաժին համապատասխան:*

Հաշվեքննողի արձագանք: *Չի ընդունվել, քանի որ հաշվեքննությամբ արձանագրվել է որ Ա.Խ.-ն 08.10.2010թ. գրանցվել է կադրերի ռեզերվում, իսկ 2011թ. ապրիլի 8-ից դուրս է եկել կադրերի ռեզերվից, և միայն դրանից 6 օր հետո՝ 2011թ. ապրիլի 14-ին նշանակվել է նոր պաշտոնի:*

<u>Իրավական նորմերին անհամապատասխանության խնդիրներ.</u>

Արտակարգ իրավիճակների աշխատակցի օրվա կապակցությամբ (նշվում է յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 4-ին) ԱԻ նախարարը ղեկավարվելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի բ) ենթակետով, ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 737 որոշման 3-րդ կետով, ինչպես նաև ԱԻՆ կանոնադրության 19-րդ կետի 13-րդ և 21-րդ կետերով, 2020թ. սեպտեմբերի 3-ին թիվ 1032 հրամանի համաձայն ԱԻՆ փրկարար ծառայողներին, հայեցողական, քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնողներին, քաղաքացիական աշխատանք կատարողներին և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պարգևատրել է մեկ պաշտոնային դրույքաչափի սահմաններում: Հարկ է նշել, որ Օրենքի 57-րդ հոդվածն ունի 7 մաս, այնինչ վերոնշյալ հրամանում որևէ մաս չի հստակեցվել: Բացի այդ, «Բ» ենթակետ ունի միայն Օրենքի 57-րդ հոդվածի 7-րդ մասը, որն էլ վերաբերում է կրթաթոշակի բարձրացմանը: Տվյալ դեպքում ԱԻ նախարարի թիվ 1032 հրամանում հիշատակված «քաղաքացիական ծառայողներ» բառակապակցությունը վերաբերվում է միայն ՀՀ կառավարության 01.03.2012թ. թիվ 277-Ն որոշմամբ փրկարար ծառայությունում սահմանված 176 քաղաքացիական ծառայողի հաստիքային միավորներին:

ԱԻ նախարարի 03.09.2020թ. թիվ 1032 հրամանում ԱԻՆ աշխատակիցներին պարգևատրելու մասին չի հիշատակվել, սակայն ֆինանսատնտեսագիտական վարչությունը հաշվի չառնելով վերոնշյալ հրամանի պահանջները, թվով 209 հաստիքային և թվով 11 արտահաստիքային աշխատակիցների վճարել է 44,794.7 հազ. դրամ պարգևավճար: Ավելին, պայմանագրային աշխատողներին վճարվել է 2,060.9 հազ. դրամ պարգևավճար, որը հակասել է ՀՀ կառավարության 02.08.2018թ. թիվ 878 որոշման 14-րդ կետի պահանջներին:

Չպահպանելով ԱԻ նախարարի հրամանի պահանջները թվով 209 հաստիքային և թվով 11 արտահաստիքային աշխատակիցների վճավել է 44,794.7 հազ. դրամ պարգևավճար

ԱԻՆ դիրքորոշում: *Համաձայն ԱԻ նախարարի 03.09.2020թ թիվ 1032-Ա հրամանի պարգևատրվել են ԱԻՆ համակարգի բոլոր աշխատակիցները, այդ թվում քաղաքացիական ծառայողները:*

Հաշվեքննողի արձագանք: *Չի ընդունվել, քանի որ 03.09.2020թ. թիվ 1032 հրամանով պետք է պարգևատրվեին միայն փրկար ծառայության քաղաքացիական ծառայողները, իսկ Նախարարության քաղաքացիական ծառայողների պարգևատրման համար առանձին հրաման չի եղել:*

<u>Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության հետ կապված խնդիրներ.</u>

Նախարարությունը չի պահպանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող» անձանց վարձատրության մասին ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերի պահանջները՝ պարգևավճարները վճարել է պաշտոնային դրույքաչափի 100%-ից ավելի:

Աշխատանքից ազատված աշխատակցին վճարվել է 353.4 հազ. դրամ պարգևավճար

- Նախարարի մամուլի քարտուղար Է. Զ.-ի պաշտոնային դրույքաչափը կազմել է 297630 դրամ, փետրվար ամսին վճարվել է 367974 դրամ, կամ՝ 70344 դրամով ավելի,
- Գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ Ա.Ե.-ն 2020թ. սեպտեմբերի 3-ին ազատվել է աշխատանքից: Աշխատանքից ազատվելու հրամանի օրը՝ 2020թ. սեպտեմբերի 3-ին, ԱԻ նախարարի թիվ 1032 հրամանով ստացել է պարգևավճար՝ 226199 դրամ: Ավելին, աշխատանքից ազատվելուց 7 օր հետո՝ 10.09.2020թ., թիվ 847 հրամանով ևս պարգևատրվել է 127 237 դրամով: Պարգևատրման չափը կազմել 353436 դրամ,
- Կադրերի գործերի վարման բաժնի գլխավոր մասնագետ Ք.Բ-ի պաշտոնային դրույքաչափը կազմել է 273158 դրամ: 4111 հոդվածով դեկտեմբեր ամսին պարգևատրվել է 276 572 դրամով, 4112 հոդվածով՝ 130 000 դրամով, ընդամենը 406572 դրամ, կամ ավելի է վճարվել 133414 դրամ,
- Կադրային հիմնախնդիրների բաժնի պետ Ք.Ռ.-ի պաշտոնային դրույքաչափը կազմել է 291677 դրամ: 4111 հոդվածով դեկտեմբեր ամսին պարգևատրվել է 295 323 դրամով, 4112 հոդվածով՝ 240 000 դրամով, ընդամենը 535323 դրամ կամ ավելի է վճարվել 243646 դրամ,

- Կադրային հիմնախնդիրների բաժնի բարեվարքության հարցերով կազմակերպիչ Ա.Մ.-ի պաշտոնային դրույքաչափը կազմել է 226 199 դրամ: 4111 հոդվածով հոկտեմբեր ամսին պարգևատրվել է 212 062 դրամով, 4112 հոդվածով՝ 100 000 դրամով, ընդամենը՝ 312 062 դրամ կամ ավելի է վճարվել 85863 դրամ,
- Պայմանագրային աշխատող Ն.Ս.-ի պաշտոնային դրույքաչափը կազմել է 212 309 դրամ: 2020թ. մայիս ամսին 4111 հոդվածով պարգևատրվել է 212309 դրամով, 4112 հոդվածով՝ 60 000 դրամով, ընդամենը 272309 դրամ կամ ավելի է վճարվել 60000 դրամ,
- Վարչության պետեր Դ.Ա.-ի, Վ.Պ.-ի, Ն.Մ.-ի պաշտոնային դրույքաչափը կազմել է 321440 դրամ, դեկտեմբեր ամսին յուրաքանչյուրը պարգևատրվել է 380000 դրամով կամ յուրաքանչյուին ավելի է վճարվել 58560 դրամ,
- Նախարարի մամուլի քարտուղար Ա.Բ.-ի պաշտոնային դրույքաչափը կազմել է 297 630 դրամ, դեկտեմբեր ամսին պարգևատրվել է 380000 դրամով կամ ավելի է վճարվել 82370 դրամ,
- և այլն:

Կատարված ընտրանքի համաձայն՝ Նախարարության 12 աշխատակիցների արձակուրդների հաշվարկման ընթացքում պարզվել է, որ 2019թ. նույնպես չի պահպանվել վերոնշյալ Օրենքի պահանջները՝ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին պաշտոնային դրույքաչափից 2,067.2 հազ. դրամ ավելի վճարում է կատարվել:

Աղյուսակ 5.

հազ.դրամ

հ/հ	Անուն ազգանուն	Պաշտոնը	Պաշտոնային դրույքաչափը	Նոյեմբերին ստացած պարգևավճարը	Դեկտեմբերին ստացած պարգևավճարը
1	Դ. Ա	Ֆինանսատնտեսագիտական վարչության պետ	310858	714973	879772
2	Գ.Ե	Ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ	273819	412527	462510
3	Ս.Պ.	Ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ	248686	298424	423818
4	Ռ.Բ.	շենքերի շինությունների և տնտեսական վարչություն գլխավոր մասնագետ	240750	290750	416675
5	Հ.Պ.	շենքերի շինությունների և տնտեսական վարչություն բաժնի պետ	256623	-	730961
6	Ա. Խ.		286816	290842	320843
7	Ս.Հ.				332510
8	Ա. Պ.		273158	314275	
9	Լ. Կ.		212309	330000	

ԱԻՆ դիրքորոշում: *Է.Զ.-ի, Ա.Ե.-ի, Ա.Ք.-ի, Ա.Հ.-ի, Ք. Բ.-ի, Ք. Ռ.-ի, Ա. Ա.-ի, Ն. Ս.-ի պարգևատրումներն իրականացվել են ՀՀ պետական բյուջեով նախատեսված պարգևատրման ֆոնդից, իսկ դրամական օգնությունները, փորձաշրջանը համակարգող անձանց պարգևատրումները աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից:*

Համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 10-րդ մասի աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից պետական ծառայողը հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պարգևատրվում է իր մինչև մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով՝ անմիջական ղեկավարի առաջարկությամբ կամ ՀՀ օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված

պաշտոնատար անձի հայեցողությամբ, մինչդեռ վարչության պետեր՝ Դ. Ա., Վ. Պ., Ն. Մ. և մամուլի քարտուղար Ա. Բ.-ն պարգևատրվել են համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ մասի՝ պետական բյուջեով պարգևատրման համար նախատեսված միջոցներից:

Հաշվեքննողի արձագանք: *Չի ընդունվել, քանի որ ԱԻ նախարարի հրամաններում չի նշվել թե որ հոդվածից է իրականացվել պարգևատրումը:*

Արձակուրդի տրամադրման, հաշվարկման և վճարման հետ կապված խնդիրներ

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, միջին աշխատավարձի չափը որոշելու համար սահմանվում է հաշվարկման միասնական կարգ: Միջին աշխատավարձի հաշվարկման համար հաշվի են առնվում աշխատանքի վարձատրության բոլոր տեսակները (հիմնական աշխատավարձ, լրացուցիչ աշխատավարձ՝ հավելումներ, հավելավճարներ, լրավճարներ, պարգևատրումներ և այլն), որոնք կիրառվում են տվյալ կազմակերպությունում՝ անկախ վճարման աղբյուրից: Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ԱԻՆ ֆինանսատնտեսգիտական վարչությունը չի պահպանել վերոնշյալ հոդվածի 1-ին մասի պահանջները, ինչի հետևանքով.

Արձակուրդային վճարի սխալ հաշվարկման հետևանքով խեղաթյուրումների ընդհանուր գումարը կազմել է 1,989.5 հազ. դրամ

- Նախարարի տեղակալ Ա.Բ-ի արձակուրդայինը հաշվարկելու ժամանակ միջին աշխատավարձի հաշվարկում չի ներառվել ստացված պարգևավճարները, ինչի հետևանքով վերջինիս հուլիս ամսվա արձակուրդայինը պակաս է վճարվել 1,249.9 հազ. դրամ, նույն բացթողումը տեղի է ունեցել նաև նոյեմբեր ամսին՝ պակաս է վճարվել 84.4 հազ.դրամ:
- Ֆինանսատնտեսագիտական վարչության պետին մի դեպքում ավելի է վճարվել 15.6 հազ.դրամ, մյուս դեպքում պակաս՝ 52.8 հազ.դրամ:
- Ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալին 298.4 հազ.դրամ ավելի է վճարվել, որը պայմանավորված է եղել պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցը բարձր սահմանելու հետ:
- ԱԻՆ ՓԾ իրավական ապահովման վարչության իրավական ակտերի մշակման և փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետին ավելի է վճարվել 288.4 հազ.դրամ:

Նախարարության արհեստակցական կազմակերպության կանոնադրության 3-րդ բաժնի 23-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն ամենամսյա անդամավճարը սահմանվել է աշխատավարձի 0,8%-ի չափով: Ֆինանսատնտեսագիտական վարչությունը չպահպանելով վերոնշյալ կանոնադրության պահանջը, ամենամսյա անդամավաճարը հաշվարկել է պաշտոնային դրույքի 0.5%-ի չափով: Ընտրված 12 աշխատակիցներից պակաս է հաշվարկվել 458.8 հազ.դրամ, իսկ բոլոր աշխատողներից՝ 4,895.6 հազ.դրամ:

- **Փրկարար ծառայություն**

Վիճակագրական ընտրանքի միջոցով ընտրված ՓԾ 86 աշխատակիցների անձնական գործերի և աշխատավարձի հաշվարկման տեղեկագրերի հաշվեքննության

արդյունքում արձանագրվել է մի շարք անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ:

<u>Պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցները որոշելու հետ կապված խնդիրներ.</u>

Նախարարությունը «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի Ե) ենթակետի, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները չպահպանելով, փրկարար ծառայությունում աշխատանքի ընդունելիս աշխատանքային ստաժում ներառել է նաև պարտադիր զինվորական ծառայություն անցած տարիները, ինչի արդյունքում փրկարար ծառայողի պաշտոնային դրույքաչափի հաշվարկման բազմապատիկ գործակիցը սահմանվել է ավելի բարձր, քան նախատեսված է ստաժ չունեցող ծառայողի համար:

ԱԻՆ դիրքորոշում: *Պարտադիր զինվորական ծառայության ժամանակահատվածը փրկարար ծառայության ստաժի մեջ ներառելու և դրա հիման վրա ծառայողների աշխատանքային ստաժը և պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակցին համապատասխան աշխաուռավարձի վճարման հարցի քննարկման շրջանակներում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել.*

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Զինվորական ծառայությունը ՀՀ զինված ուժերում և այլ զորքերում օրենքով սահմանված պետական ծառայության տեսակ է: ՀՀ զինված ուժերում և այլ զորքերում սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով զինվորական ծառայություն անցնող անձինք համարվում են զինծառայող, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Զինվորական ծառայությունը՝ ի թիվս այլնի ներառում է նաև զորակոչի՝ պարտադիր կամ զորահավաքային կամ պայմանագրի կնքման կամ յարժական հավաքի կանչվելու միջոցով զինվորական ծառայությանը ներգրավումը:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին համապատասխան՝ ժամկետային զինվորական ծառայությունը բաղկացած է պարտադիր և պայմանագրային զինվորական ծառայություններից:

Նույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում ներառվում է զինծառայողի՝ սույն օրենքով սահմանված զինվորական ծառայության մեջ գտնվելու ամբողջ ժամանակահատվածը, իսկ զինվորական ծառայության ընդհանուր ժամկետը որոշվում է օրացուցային հաշվարկով:

Նույն օրենքի 61-րդ հոդվածի 2 րդ մասի համաձայն՝ Զինծառայողների դրամական ապահովությունն իրականացվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքներին և հիմնական պայմաններին համապատասխան, իսկ սույն հոդվածով սահմանված՝ զինծառայողների դրամական ապահովությանը վերաբերող դրույթները տարածվում են նաև քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների վրա՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի և համապատասխան ոլորտները կարգավորող օրենքների պահանջներին համապատասխան:

ՀՀ աշխատանքային օրենսգիրք 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային ստաժը այն ժամանակահատվածն է, որի ընթացքում քաղաքացին եղել է սույն օրենսգրքով կարգավորվող աշխատանքային հարաբերությունների մեջ, ինչպես նաև այլ ժեամանակահատվածներ, որոնք, նորմատիվ իրավական ակտերին կամ կոլեկտիվ պայմանագրերին համապատասխան, կարող են հաշվարկվել աշխատանքային ստաժում, որով աշխատանքային օրենսդրությունը, այլ նորմատիվ իրավական ակտերը և կոլեկտիվ պայմանագրերը պայմանավորում են որոշակի աշխատանքային իրավունքներ կամ աշխատանքային լրացուցիչ երաշխիքներ ու արտոնություններ, իսկ 138-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աշխատաժամանակում չեն ներառվում, սակայն աշխատանքային սրաժում հաշվարկվում են՝ պետական, հասարակական կամ քաղաքացիական պարտականությունների կատարման, զինվորական հաշվառման պարտականություններ կատարելու, զորակոչային տեղամասերին կցագրվելու, վարժական հավաքներին մասնակցելու և ժամկետային զինվորական ծառայության ժամանակահատվածները: («ՀՀ աշխատանքային

օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2020թ հոկտեմբերի 9-ի ՀՕ-460-Ն ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «զորակոչային տեղամասերին կցագրվելու, վարժական հավաքներին մասնակցելու և ժամկետային» բառերը փոխարինվել են «վարժական հավաքներին, զինվորական վարժանքներին կամ զորավարժություններին մասնակցելու, ինչպես նաև զորահավաքային» բառերով.)

Նշված դրույթների ոաումնասիրության արդյունքում կարելի է փաստել, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքը, որը՝ ի թիվս այլնի կարգավորում է նաև քաղաքացիների կողմից ՀՀ պաշտպանությանը մասնակցելու սահմանադրական պարտականության (պարտադիր զինվորական ծառայության) շրջանակներում քաղաքացիների զինվորական ծառայությանը նախապատրաստության, կազմակերպման և իրականացման, ինչպես նաև զինծառայողների ու զինծառայողներին հավասարեցված անձանց իրավական և սոցիալական երաշխիքների հետ կապված հարաբերությունները, ուղղակիորեն սահմանում է, որ Զինվորական ծառայությունը, որը՝ ի թիվս այլնի ներառում է նաև ժամկետային ծառայությունը՝ զորակոչի՝ պարտադիր կամ զորահավաքային կամ պայմանագրի կնքման կամ վարժական հավաքի կանչվելու միջոցով զինվորական ծառայությանը ներգրաւիմը, համարվում է ՀՀ զինված ուժերում և այլ զորքերում օրենքով սահմանված պետական ծառայության տեսակ, իսկ նշված ծառայությունը անցնող և զինծառայող համարվող անձանց ծառայության ընդհանուր ժամկետում ներառվում է զինծառայողի՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով սահմանված զինվորական ծառայության մեջ գտնվելու ամբուր ժամանակահատվածը՝ այդ թվում պարտադիր զինվորական ծառայության ժամանակահատվածը:

Տվյալ դեպքում, հաշվի առնելով այն, որ պարտադիր (ժամկետային) զինվորական ծառայության ժամանակահատվածը որպես զինվորական ծառայության մեջ գտնվելու ամբողջ ժամանակահատված «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքին համապատասխան կարող է հաշվարկվել ծառայողի աշխատանքային ստաժում, որով աշխատանքային օրենսդրությունը և նշված օրենքը պայմանավորում են որոշակի աշխատանքային իրավունքներ կամ աշխատանքային լրացուցիչ երաշխիքներ ու արտոնություններ՝ փրկարար ծառայողների որպես պարտադիր (ժամկետային) զինվորական ծառայություն անցած զինծառայողների դրամական ապահովությունը և դրան վերաբերող դրույթները տարածվում են փրկարար ծառայողների վրա և իրականացվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի և համապատասխան ոլորտները կարգավորող օրենքների պահանջներին համապատասխան՝ նկատի ունենալով այն, որ ՀՀ աշխատանքային օրենսգիրք 20-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նորմատիվ իրավական ակտ՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքը և դրա 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ, 7-րդ հոդվածի 1-ին և 61-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված հիմքերը:

Հաշվեքննողի արձագանք: *Չի ընդունվել, քանի որ դիրքորոշումն իրենից ներկայացնում է իրավական ակտերի մեկնաբանություն, որի իրավասությունը ԱԻՆ չունի, մեկնաբանությունը իրավական հիմք չի կարող հանդիսանալ: Ավելին, պետական բյուջեի կատարման 6 և 9 ամիսների հաշվեքննության շրջանակներում սույն հարցի վերաբերյալ ԱԻՆ կողմից ներկայացվել է բացառապես իրարից տարբեր դիրքորոշումներ:*

Թվով 56 փրկարար ծառայողի պաշտոնային դրույքաչափի գործակցի ոչ ճիշտ սահմանելու հետևանքով կատարվել 3,734.3 հազ. դրամի ավելի վճարում

Թվով 83 փրկարար ծառայողների անձնական գործերի ուսումնասիրության և աշխատավարձի հաշվարկման տեղեկագրերի համադրման արդյունքում պարզվել է, որ թվով 56-ի (67.5%) պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցները սահմանվել են բարձր, ինչի հետևանքով 2020թ. պետական բյուջեից կատարվել է 3,734.3 հազ.դրամի ավելի վճարում:

<u>Հիմնական աշխատավարձի հերթական մակարդակի ավելացման հետ կապված խնդիրներ</u>

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պետական ծառայողի հիմնական աշխատավարձի հերթական մակարդակի ավելացումն իրականացվում է աշխատանքային տարին լրանալուն հաջորդող ամսվա 1-ից: Նախարարությունը չպահպանելով վերոնշյալ օրենսդրական պահանջը, մի շարք դեպքերում աշխատավարձի մակարդակները ավելացրել է աշխատանքային տարին լրանալու ամսին կամ դրանից ավելի ուշ:

- Շիրակի ՄՓՎ-ի ճգնաժամային կառավարման կենտրոնի ՕՀՀ-ի ավագ հրահանգիչ Է.Ե.-ն փրկարար ծառայությունում ծառայության է անցել 2000թ. օգոստոսի 2-ից: Ֆինանսատնտեսագիտական վարչությունը Օրենքով սահմանված կարգով սեպտեմբերին գործակիցը բարձրացնելու փոխարեն բարձրացրել է հոկտեմբեր ամսին, ինչի հետևանքով վերջինիս պակաս է վճարվել 14 000 դրամ:
- Փրկարար ծառայության հրահանգիչ Ա.Հ.-ն ծառայության է անցել 2018թ. սեպտեմբերի 19-ից, պաշտոնային դրույքաչափը սահմանվել է 4.04 գործակից: Օրենքով սահմանված կարգով հոկտեմբերին գործակիցը բարձրացնելու փոխարեն բարձրացվել է սեպտեմբեր ամսին, ինչի հետևանքով ավելի է վճավրել 15873 դրամ:
- Փրկարար ծառայության կրտսեր հրահանգիչ Ա.Ս.-ի ծառայության ստաժի 5 տարին լրացել է 2020թ. հունվար ամսին (գործակիցը 2.38), նույն ամսին գործակիցը փոփոխվել է և սահմանվել 2.44, ինչի հետևանքով 6349 դրամ ավելի է վճարվել:
- «Նաիրիտ գործարան» ՓԲԸ պահպանության ՀՀՋ օղակի հրամանատար Ս.Մ.-ն ծառայության է անցել 03.10.2014թ., պաշտոնային դրույքաչափի գործակիցը սահմանվել է 1.85: 2020թ հունվար-օգոստոս ամիսների համար սահմանվել է 2.44, ինչի հետևանքով ավելի է վճարվել է 372.4 հազ. դրամ: 2020թ. սեպտեմբեր ամսին կատարվել է ճշգրտում և դրույքաչափը դարձել է 1.85: 2020թ. սեպտեմբեր ամսին Ս.Մ.-ի դրույքաչափը կազմել է 122359 դրամ, սակայն վերջինս պարգևատրել է օգոստոս ամսվա դրույքաչափով՝ 161382 դրամով: Կատարվել է 39023 դրամի ավելի վճարում:

ԱԻՆ դիրքորոշում: *«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն 20-րդ հոդվածով սահմանված դրույթները չեն տարածվում ՀՀ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողների վարձատրության հետ կապված հարաբերությունների վրա: Փ/ծ ավագ Ս.Մ.-ի գործակիցը փոփոխվել է 17.09.2020թ ին, քանի որ Փ/ծ տնօրենի 17.09.2020թ թիվ 17/1018 հրամանով "Նաիրիտ գործարան" ՓԲԸ պահպանության հատուկ հրշեջ ջոկատի օղակի հրամանատարը /2.44 գործակից/ վերանշանակվել է ԵՓՎ "Նաիրիտ գործարան" ՓԲԸ թիվ 12 հրշեջ փրկարարական ջոկատի օղակի հրամանատար /1.85 գործակից/:*

Հաշվեքննողի արձագանք: *Չի ընդունվել, քանի որ խոսքը վերաբերվում է ոչ թե գործակիցների հաշվարկմանը, այլ դրա փոփոխման ժամանակային գործոնին, որը պետք է իրականացվեր աշխատանքային տարին լրանալուն հաջորդող ամսվա 1-ից, ինչը Նախարարությունն իրականացրել է ժամանակային շեղումներով:*

<u>Արձակուրդայինի հաշվարկման և վճարման հետ կապված խնդիրներ.</u>

ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ամենամյա արձակուրդի համար գործատուն աշխատողին վճարում է միջին աշխատավարձ, որը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձը տրամադրվող արձակուրդի

օրերի թվով բազմապատկելու միջոցով, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդը սկսելուց երեք օր առաջ: Եթե աշխատողի համար հաշվարկված աշխատավարձը սահմանված ժամկետում չի վճարվում աշխատողից անկախ պատճառներով, ապա ամենամյա արձակուրդը երկարաձգվում է այնքան օրով, որքան օրով երկարաձգվել է աշխատավարձի վճարումը, և երկարաձգված ժամանակի համար վճարումը կատարվում է այնպես, ինչպես ամենամյա արձակուրդի համար:

Վերոնշյալ հոդվածի 2-րդ մասի դրույթը արտացոլված է նաև Փրկարար ծառայության հերթական (ամենամյա) արձակուրդի տրամադրման կարգը սահմանելու մասին ԱԻ նախարարի 11.03.2013թ. թիվ 224 հրամանի 14-րդ կետում:

Արձակուրդայինի ոչ ճիշտ հաշվարկման հետևանքով թվով 73 փրկարար ծառայողի պակաս է վճարվել 4,763.0 հազ. դրամ, իսկ թվով 10-ին՝ ավելի է վճարվել 322.2 հազ.դրամ

Նախարարության կողմից չի պահպանվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, ինչպես նաև 192-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, սահմանված կարգով չի հաշվարկվել և չի վճարվել արձակուրդային վճարները, իսկ ընտրանքում ներառված փրկարար ծառայության 83 աշխատողներին արձակուրդային վճարների փոխարեն տվյալ ամսվա վերջին վճարվել է հերթական աշխատավարձը: Վերոնշյալ օրենսդրական պահանջները չկատարելու հետևանքով 83 փրկարար ծառայողներից 73-ին պակաս է վճարվել 4,763.0 հազ. դրամ, իսկ 10-ին ավելի է վճարվել 322.2 հազ.դրամ:

ԱԻՆ դիրքորոշում: *Նշված խնդրին ԱԻՆ անդրադարձել է նախարարության վեց ամիսների գործունեության հաշվեքննության եզրակացության առարկությունների շրջանակում: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ԱԻ նախարարի 22.01.2021թ թիվ 63-Ա հրամանով սահմանվել է փրկարար ծառայողների արձակուրդների տրման կարգը, ինչպես նաև ուժը կորցրած ճանաչվել 11.03.2013թ թիվ 224 հրամանը:*

Հաշվեքննողի արձագանք: *Ընդունվել է ի գիտություն, սակայն հավեքննության արդյունքների վրա ազդեցություն չի ունեցել, քանի որ փոփոխությունը իրականացվել է հաշվեքննության ավարտից հետո:*

<u>Նորմատիվ-իրավական ակտերի կիրակման խնդիրներ</u>

<u>Հրաձիգների վարձատրություն:</u> Փրկարար ծառայության 2020թ. հաստիքացուցակով ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության, քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի հաստիքացուցակով սահմանվել է հատուկ օբյեկտների պահպանության երկու ջոկատ՝ 252 հաստիքային միավորով, որից 209-ը (այդ թվում՝ 2 ջոկատի հրամանատար, 2 հրամանատարի տեղակալ, 12 խմբի պետ և 193 հրաձիգ) «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի 108-րդ հոդվածի 1-ին մասի փրկարար ծառայողներ չեն հանդիսանում և նրանց պաշտոնային դրույքաչափի գործակիցները պետք է սահմանվեր ՀՀ կառավարության թիվ 737-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի «Փրկարար ծառայություն» բաժնի պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցներով: Նախարարությունը չի պահպանել վերոնշյալ օրենսդրական պահանջները, ավելին՝ վճարել է նաև ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 712-Ն որոշման 11.1 հավելվածով սահմանված հավելումները:

Օրենսդրական պահանջները չպահպանելու հետևանքով կատարվել է 214,334.9 հազ.դրամի ավելի վճարում

Թվով 209 հաստիքային միավորների աշխատավարձի չափը կազմել է 236,890.5 հազ.դրամ, սակայն Նախարարությունը հաշվի չառնելով վերոհիշյալ օրենսդրական պահանջները, այն սահմանել է 448,136.4 հազ. դրամ (այդ թվում՝ հավելումը՝ 139,302.6 հազ.դրամ), կամ ավելի է սահմանել 211,588.1 հազ.դրամով:

Ընտրանքում ներառված աշխատակիցներից 3-ը քաղաքացիական պաշտպանության վարչության, քաղաքացիական ուժերի հավաքական կենտրոնի հատուկ օբյեկտների պահպանության ջոկատների հրաձիգներ են: Վերոնշյալ օրենսդրական կարգավորման հիմքով, նրանք փրկարար ծառայող չեն, իսկ հրաձիգների պաշտոնային դրույքաչափը սահմանվում է ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 737 որոշման հավելված 1-ով (72.8 տող) և կազմում է 76061 դրամ: Հիմք ընդունելով «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին մասի պահանջը, հրաձիգի պաշտոնային դրույքաչափը, ներառյալ լրավճարը, սահմանվել է 93131 դրամ:

Նախարարությունը չի պահպանել «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի պահանջը և հրաձիգի պաշտոնը դասել է որպես փրկարար ծառայողի, իսկ պաշտոնային դրույքաչափի գործակիցը սահմանել է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածով սահմանված պաշտոնային դրույքաչափի հաշվարկան գործակցով (170788 դրամ, որից հավելումը՝ 59011 դրամ), կամ մեկ հաստիքային միավորի հաշվով ավելի է սահմանվել 77657 դրամով: Արդյունքում, ընտրանքում ներառված 3 հրաձիգների 2020թ. 2,746.8 հազ. դրամով ավելի աշխատավարձ է սահմանվել և վճարվել:

ԱԻՆ դիրքորոշում: *Փրկարար ծառայության կազմում գործող քաղաքացիական պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի հատուկ օբյեկտների պահպանության ջոկատների հրամանատարների, հրամանատարների տեղակալների, խմբերի պետերի, ավագ հրաձիգների, վարորդ հրաձիգների, հրաձիգների պաշտոնները, համաձայն ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 16-ի թիվ 175-Ն որոշման համարվում են փրկարարական ծառայության պաշտոններ:*

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Փրկարար ծառայության կազմում գործող Ծառայության կազմակերպման վարչության հատուկ պահպանության և պարեկապահակային բաժնի (փողային նվագախումբ) 33 երաժիշտներից 21-ի պաշտոնները փրկարարական ծառայության են, իսկ 12-ը՝ տեխնիկական սպասարկում իրականացնողների:

Ելնելով վերոգրյալից տեղեկացնում եմ, որ փրկարարական ծառայության պաշտոնների պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի, իսկ տեխնիկական սպասարկում իրականացնողների պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները՝ համաձայն ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 737 որոշման:

Հաշվեքննողի արձագանք: *Չի ընդունվել, քանի որ «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի 108-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ նշված աշխատակիցները փրկարար ծառայողներ չեն հանդիսանում:*

<u>Երաժիշտների վարձատրություն:</u> Ընտրանքում ներառված փրկարար ծառայության թվով 86 աշխատողներից՝ Մ.Ն.-ն ՓԾ ԾԿՎ հատուկ պահպանության պարեկապահակային բաժնի փողային նվագախմբի երաժիշտ է, որի պաշտոնը «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն փրկարար ծառայող չի հանդիսանում և նրա պաշտոնային դրույքաչափը պետք է սահմանվեր ՀՀ

կառավարության 03.07.2014թ. թիվ 737-Ն որոշման 1-ին հավելված 71-րդ տողով սահանված պաշտոնային դրույքաչափի հաշվարկան բազմապատիկ գործակցով:

Նախարարությունը չպահպանելով Օրենքի պահանջները, երաժիշտի պաշտոնը դասել է որպես փրկարար ծառայողի, և նրա պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցը սահմանել է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածով սահմանված համապատասխան ստաժի բազմապատիկ գործակցով, ինչի հետևանքով ամսական աշխատավարձը 93642 դրամ սահմանելու փոխարեն սահմանել է 195305 դրամ, (այդ թվում՝ 47 813 դրամը՝ հավելավճար), կամ՝ ամսական 101663 դրամով ավելի: Կատարվել է 2,874.63 հազ.դրամ վճարում, այդ թվում՝ 531,0 պարգևավճար, 573,8 հազ.դրամ հավելավճար:

Փրկարար ծառայության ԾԿՎ-ի հատուկ պահպանության պարեկապահակային բաժնում գործում է փողային նվագախումբ՝ 33 երաժշտի հաստիքային միավորով, որից 21-ի պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցը սահմանվել է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի համաձայն, իսկ 12-ինը՝ ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 737-Ն որոշման 1-ին հավելվածի 69-71-րդ տողերով:

Թվով 33 երաժիշտներին կատարվել է 23,210.5 հազ. դրամով ավելի վճարում

Թվով 33 երաժշտի հաստիքային միավորի տարեկան աշխատավարձը 2020թ. ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 737 որոշման համաձայն պետք է կազմեր 37,082.2 հազ. դրամ, սակայն Նախարարությունը հաշվի չառնելով Օրենքի պահանջը, այն սահմանել է 60,292.7 հազ.դրամ, (այդ թվում՝ 12,048.9 հազ.դրամ հավելավճար), կամ՝ 23,210.5 հազ.դրամով ավելի:

<u>Դրույքաչափից ավելի սահմանված պարգևավճարներ.</u>

ԱԻ նախարարի 2020թ. պարգևատրման բոլոր հրամանների 1-ին կետով սահմանվել է պարգևավճարի չափը, այն է՝ մեկ պաշտոնային դրույքաչափի սահմաններում: Ֆինանսատնտեսագիտական վարչությունը չպահպանելով վերոնշյալ հրամանների 1-ին կետի պահանջը, պարգևավճարը հաշվարկելիս ներառել է նաև հավելավճարները, լրավճարները, ինչի հետևանքով տարվա ընթացքում կատարվել է ավելի վճարումներ: Մասնավորապես, Վայոց Ձորի ՄՓՎ-ի Վայքի ՀՓՋ-ի հավաքարար Մ.Թ.-ի պաշտոնային դրույքաչափը կազմել է 66140 դրամ, ավելի վճարված գումարը՝ 74790 դրամ: Բազայի պահակներ Ա.Ղ.-ի և Ս.Մ.-ի պաշտոնային դրույքաչափը կազմել է 72754 դրամ, ավելի վճարված գումարը, յուրաքանչյուրին՝ 47197 դրամ:

Սյունիքի ՄՓՎ Կապանի ՀՓՋ-ի վարորդ Ա.Դ.-ն աշխատանքի է ընդունվել 05.03.2002թ, պաշտոնային դրույքաչափը սահմանվել է 89610 դրամ՝ 109131 դրամի փոխարեն կամ պակաս է սահմանվել 19521 դրամով: Փորձաշրջանում գտնվելու ժամանակաշրջանում դեռևս չհանդիսանալով փրկարար ծառայող, ԱԻ նախարարի 31.01.2020թ. թիվ 149 հրամանի 5-րդ կետի համաձայն պաշտոնային դրույքաչափի 60%-ի չափով՝ 53766 դրամով պարգևատրվել է:

2020թ. պաշտոնային դրույքաչափից 1,556.2 հազ. դրամով ավելի պարգևավճար է վճարվել

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց

վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից պետական ծառայողը հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պարգևատրվում է իր մինչև մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով՝ անմիջական ղեկավարի առաջարկությամբ կամ ՀՀ օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված պաշտոնատար անձի հայեցողությամբ: Նախարարությունը, չպահպանելով նշված օրենսդրական պահանջը, 2020թ. իրականացրել է մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափից ավելի վճարումներ: Մասնավորապես՝

- Գեղարքունիքի ՄՓՎ ավագ վարորդ Գ.Հ.-ի պաշտոնային դրույքաչափը կազմել է 121 036 դրամ, մարտ ամսին պարգևատրվել է 259 740 դրամով, կամ ավելի է վճարվել 138704 դրամով,
- Լոռու ՄՓՎ-ի հրշեջ փրկարար Ա.Զ.-ի պաշտոնային դրույքաչափը փետրվար ամսին կազմել է 111 777 դրամ, նույն ամսին պարգևատրվել է 649 350 դրամով, կամ ավելի է վճարվել 537573 դրամով,
- Շիրակի մարզի ՄՓՎ-ի ջրասուզակ փրկարար Մ.Բ.-ի պաշտոնային դրույքաչափը կազմել է 117068 դրամ, նոյեմբեր ամսին պարգևատրվել է 238 170 դրամով կամ ավելի է վճարվել 121102 դրամով,
- ԵՓՎ օղակի հրամանատար Ս.Մ.-ի պաշտոնային դրույքաչափը կազմել է 122 359 դրամ, սեպտեմբեր ամսին պարգևատրվել է 161 382 դրամով, նոյեմբեր ամսին՝ 248 680 դրամով կամ ավելի է վճարվել 287703 դրամով,
- ՓԾ ավագ հրահանգիչ Տ. Դ. պաշտոնային դրույքաչափը կազմել է 316149 դրամ, նոյեմբեր ամսին պարգևատրվել է 434 416 դրամով կամ ավելի է վճարվել 118267 դրամով,
- Հրաձիգ Ա.Հ. պաշտոնային դրույքաչափը կազմել է 111 777 դրամ, վերջինս փրկարար ծառայող չի հանդիսանում, սեպտեմբեր ամսին պարգևատրվել է 241 647 դրամով կամ ավելի է վճարվել 129870 դրամով,
- և այլն:

ԱԻՆ դիրքորոշում: *Վայոց Ձորի ՄՓՎ-ի Վայքի ՀՓՋ-ի հավաքարար Մ.Թ.-ի պաշտոնային դրույքաչափը կազմում է 72751 ՀՀ դրամ, ոչտի ավել վճարում չի կատարվել:*

Նախարարության բազայի պահակներ Ա.Ղ.ի և Ս.Մ.ի աշխատավարձը կազմում է 89610 դրամ՝ ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի չափով, ոչտի պարգևատրումը հաշվարկվել է 89610 դրամի նկատմամբ:

Շիրակի ՄՓՎ-ի ջրասուզակ-փրկարար ւի/ծ ավագ սերժանտ Մ.Բ.-ն 2020թ. նոյեմբեր ամսին պարգևատրվել է պաշտոնային դրույքաչափի 20%-ի չափով (հր.1430), ինչպես նաև աշխատավարձի չափով (հր. 1482), և գաղտնի հրամանով 38961 ՀՀ դրամով: Տ. Դ-ն, Ա. Զ.-ն, Ա. Հ.-ն պարգևատրվել են համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության» ՀՀ օրենքի 22 րդ հոդվածի 9-րդ մասի՝ պետական բյուջեով պարգևատրման համար նախատեսված միջոցներից:

Հաշվեքննողի արձագանք: *Չի ընդունվել, քանի որ հրամանի 1-ին կետով սահմանվել է պարգևավճարի չափը՝ մեկ պաշտոնային դրույքաչափի սահմաններում, մինչդեռ վճարումը կատարվել է աշխատավարձի չափով: Մ.Բ.-ի վերաբերյալ դիրքորոշումը չի ընդունվել, քանի որ անկախ հրամանների տեսակից և քանակից պարգևատրման չափը առավելագույնը պետք է կազմեր մինչև մեկ պաշտոնային դրույքաչափ: Ինչ վերաբերվում է Տ.Դ-ի, Ա.Զ.-ի, Ա.Հ.-ի պարգևատրումներին, ապա ԱԻ նախարարի համապատասխան հրամաններում նշված չի եղել թե որ հոդվածից է իրականացվելու պարգևատրումը:*

Իրավահավասարազոր իրավական ակտերի անհամապատասխանություններ

«Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի համաձայն ծառայության առանձնահատկություններից ելնելով՝ ծառայությունը կարող է տարվել մեկ լրիվ օր տևողությամբ գիշերային ժամերի (22^{00}-6^{00}) համար ՀՀ աշխատանքային օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գիշերային ծառայության հավելումի և այլ գումարների վճարմամբ, որից հետո ծառայողին տրվում է 3 օր հանգիստ, իսկ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ՀՀ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողներին, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողներին արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատանքի համար հավելումներ չեն տրվում, եթե դրանք չեն կարգավորվում Օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասով:

Արդյունքում՝ «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 08.07.2005թ.) 48-րդ հոդվածը հակասում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի (12.12.2013թ.) 8-րդ հոդվածի 3-րդ մասին:

Երկու հավասարազոր իրավական փաստաթղթերթում հակասություններ առաջանալու դեպքում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն՝ գործում է ավելի վաղ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը՝ տվյալ դեպքում «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի պահանջը, քանի որ այն ընդունվել է ավելի վաղ՝ 08.07.2005թ.:

Նախարարությունը հաշվի չի առել վերոնշյալը, ինչի հետևանքով ընտրանքում ներառված թվով 63 փրկարար ծառայողների չի վճարել գիշերային ժամերի (22^{00}-6^{00}) համար սահմանված 8,067.7 հազ.դրամ հավելումը:

Համաձայն աշխատաժամանակի հաշվարկման տեղեկագրերի Նախարարությունը չի պահպանել «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի պահանջը, որոշ ծառայողներ հերթապահել են 24 ժամից ավելի և չեն վճարվել Օրենքով սահմանված գիշերային ծառայության համար նախատեսված հավելավճարները: Մասնավորապես՝

- Գեղարքունիքի ՄՓՎ Սևանի ՀՋՋ-ի օղակի հրամանատար Ս.Հ. օգոստոս ամսին 10 օր աշխատել է 24 ժամ տևողությամբ:
- Շիրակի ՄՓՎ-ի Գյումրու թիվ 40 ՀՓՋ-ի ջրասուզակ փրկարար Մ. Բ. դեկտեմբերի 8-11-ը անընդմեջ 48 ժամ գտնվել է հերթապահության մեջ:
- ՀԱԷԿ-ի խմբի հրամանատար կապիտան Ֆ. Խ. մարտի 2-7-ը անընդմեջ հերթապահել է 24 ժամ տևողությամբ:
- Հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի ընդհանուր պրոֆիլի փրկարար ենթապա Ա. Ս. փետրվարի 15-18-ը, ապրիլի 11-14-ը հերթապահել է 48 ժամ անընդմեջ:
- Մալաթիա Սեբաստիա ՀՓՋ-ի ավագ հրշեջ Գ. Տ. փետրվարի 10-13-ը, սեպտեմբերի 25-28-ը 48 ժամ անընդմեջ հերթապահել է:
- Արաբկիր ՀՓՋ-ի վարորդ Գ. Ա. մարտի 8-11-ը և 20-23-ը անընդմեջ հերթապահել է:

ԱԻՆ դիրքորոշում: *«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ՀՀ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության համակարգերում զինվորական ծառայության պաշտոն*

զբաղեցնողներին, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողներին արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատանքի համար հավելումներ չեն տրվում: Ելնելով վերոգրյալից գիշերային ծառայության հերթապահություն իրականացնող փրկարար ծառայողներին հավելումներ չեն վճարվում:

Հաշվեքննողի արձագանք: *Չի ընդունվել, քանի որ հավասարազոր իրավական փաստաթղթերթում հակասություններ առաջանալու դեպքում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն՝ գործում է ավելի վաղ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը՝ տվյալ դեպքում «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի պահանջը:*

<u>Աշխատաժամանակի հաշվարկման տեղեկագրերի հետ կապված խնդիրներ.</u>

ՃԿԱԿ-ի հրահանգիչ փրկարար ծառայության լեյտենանտ Տ. Ղ. 2020թ. մարտի 17-23 համաձայն տեղեկագրի, ներկայացրել է անաշխատունակության թերթիկ, մարտի 26-ին աշխատանքի չի ներրկայացել: Մարտ ամսին աշխատել է 21 օր, սակայն հաշվի չի առնվել բացակայությունը՝ աշխատավարձը վճարվել է 22 աշխատանքային օրվա հաշվով:

2020թ. ապիլին 22-ին ներկայացված ապրիլ ամսվա աշխատաժամանակի հաշվարկման թիվ 4 տեղեկագրի համաձայն Տ.Ղ. ապրիլ ամսին իրականացրել է 9 օր հեռավար, իսկ 12 օր՝ առկա աշխատանք: 2020թ. ապրիլի 28-ին ՃԿԱԿ-ի կողմից ներկայացվել է ապրիլ ամսվա աշխատաժամանակի հաշվարկման թիվ 4.1 ճշտված տեղեկագիրը, համաձայն որի՝ Տ. Ղ. 7 օր իրականացրել է հեռավար, 10 օր՝ առկա աշխատանք, իսկ ապրիլի 27-ից գտնվել է արձակուրդում:

ՓԾ աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրերի վարումն իրականացվել է ոչ պատշաճ, բազմաբնույթ թերություններով և բազմակի ճշգրտումներով

Տեղեկագրից երևում է Տ. Ղ. բացակայություններ չի ունեցել, սակայն ապրիլի 24-ի համար ներկայացրել է անաշխատունակության թերթիկ, որը եղել է ջնջումներով, ինչը համապատասխան նշագրումով և կնիքով չի հաստատվել բուժող բժշկի կողմից (ապրիլի 24-ը «ՀՀ տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն ոչ աշխատանքային օր է): Ներկայացված անաշխատունակության թերթիկի համաձայն՝ Տ. Ղ. 24.04.2020թ. մինչև 05.05.2020թ. գտնվել է ամբուլատոր, մայիսի 6-21-ը՝ ստացիոնար ռեժիմում: Առաջին դեպքում ներկայացված անաշխատունակության թերթիկը փակված չի եղել բուժող բժշկի կողմից, ստացիոնար բուժումից վերադառնալուց հետո ապրիլի 24-ին բացված անաշխատունակության թերթիկը շարունակվել է մինչև հունիսի 4-ը: Նախարարությունը վերոնշյալը հաշվի չառնելով վճարումը կատարել է ամբողջությամբ:

Տ. Ղ. 2020թ. արձակուրդում եղած ժամանակաշրջանում մայիսի 27-ից մինչև հունիսի 5-ը՝ 24 աշխատանքային օր ներկայացրել է անաշխատունակության թերթիկ: Տ.Ղ. ծառայության պետք է անցներ հուլիսի 2-ին, սակայն համաձայն տեղեկագրի՝ հուլիսի 2-ին, 3-ին և 6-ին ծառայության չի անցել, իսկ 7-13-ը իրականացրել է հեռավար աշխատանք, սակայն վճարվել է ամբողջ ամսվա համար, կամ ավելի է վճարվել 27739 դրամով:

Համաձայն աշխատաժամանակի հաշվարկման տեղեկագրերի որոշ աշխատողներ հերթապահությունների օրերին առանց համապատասխան իրավական ակտի ինքնամեկուսացվել են և այդ օրերի համար վճարվել են ամբողջությամբ՝

- Արաբկիրի 5-րդ ՀՓՋ-ի վարորդ Ձ. Ա. գրաֆիկով 23.03.2020թ. ունեցել է հերթապահություն, սակայն այդ օրը ինքնամեկուսացվել է: Ապրիլ ամսվա տեղեկագրի համաձայն՝ ապրիլի 16-ին, 20-ին, 24-ին և 28-ին պետք է

իրականացներ հերթապահություն, այնինչ ապրիլի 16-24-ին և 28-ին ինքնամեկուսացվել է:

- Արաբկիրի 5-րդ ՀՓՋ-ի վարորդ Գ. Ա. մարտի 25-ին և 30-ին, ապրիլի 3-ին, 7-ին, 11-ին և 15-ին ունեցել է հերթապահություն, սակայն նշված օրերին ինքնամեկուսացվել է:
- Սյունիքի ՄՓՎ Քաջարանի ՀՓՋ-ի հրշեջ փրկարար Կ. Ա. 15.09-14.10.2020թ. գտնվել է արձակուրդում, սակայն հոկտեմբեր ամսվա տեղեկագրով ներկայացվել է, որ վերջինս հոկտեմբերի 3-4-ը, 7-8-ը, 11-12-ը գտնվել է հերթապահության մեջ: Համաձայն 2020թ. հոկտեմբերի 23-ին ներկայացված ճշտված տեղեկագրի՝ սեպտեմբերի 29-30-ը վերջինս հերթապահել է:
- Սյունիքի ՄՓՎ-ի Կապանի ՀՓՋ-ի օղակի հրամանատար Գ. Ն. սեպտեմբերի 1-30-ը ներառյալ գտնվել է արձակուրդում, սակայն սեպտեմբերի 30-ին գտնվել է նաև հերթապահության մեջ:
- Գեղարքունիքի ՄՓՎ-ի Վարդենիսի թիվ 34 ՀՓՋ-ի հրշեջ փրկարար Հ.Վ. 2020թ. նոյեմբերի 12-ից մինչև դեկտեմբերի 14-ի համար ներկայացրել է անաշխատունակության թերթիկ, սակայն դեկտեմբեր ամսվա տեղեկագրում դեկտեմբերի 13-ին նշվել է հերթապահություն:
- Քաղաքացիական պաշտպանության վարչության հատուկ օբյեկտների պահպանության հրաձիգ Ա. Է. դեկտեմբերի 7-16-ի համար ներկայացրել է անաշխատունակության թերթիկ, սակայն դեկտեմբերի 15-ից հունվարի 17-ը գտնվել է արձակուրդում:

ԱԻՆ դիրքորոշում: *Ըստ ԱԻՆ ՓԾ ՃԿԱԿ-ի անձնակազմի 2020թ. մարտ ամսվա աշխատաժամանակի տեղեկագրի առկա բացակայությունների/ հեռավար, մեկուսացում, ինքնամեկոաացում/ հրահանգիչ Տ. Ղ.-ն մարտի 26 ին աշխատել է հեռավար եղանակով:*

Գեղարքունիքի ՄՓՎ-ի Վարդենիսի ՀՓՋ-ի կողմից 2021թ.-ի հունվարին ներկայացվել է ճշտված աշխատաժամանակի տեղեկագիր, որտեղ Հ.Վ.-ն դեկտեմբերի 13-ին եղել է հիվանդ:

Սյունիքի ՄՓՎ-ի Քաջարանի ՀՓՋ-ի հրշեջ-փրկարար Կ.Ա.-ն համաձայն ՄԻՆ Փրկարար ծառայության տնօրենի թիվ 17/1099 հրամանի հետ է կանչվել հերթական արձակուրդից սեպտեմբերի 27-ից:

Սյունիքի ՄՓՎ-ի Կապանի ՀՓՋ-ի օղակի հրամանատար Գ.Ն.-ն համաձայն ՄԻՆ Փրկարար ծառայության տնօրենի թիվ 17/1094 հրամանի հետ է կանչվել հերթական արձակուրդից սեպտեմբերի 27-ից:

Հաշվեքննողի արձագանք: *Դիրքորոշման մեջ նշված փաստաթղթերը և համապատասխան հիմնավորումները հաշվեքննությունն իրականացնող խմբին չեն տրամադրվել:*

Հաշվեքննության ընթացքում աշխատանքի վարձատրության նկատմամբ ընտրանքային կարգով ուսումնասիրված գործառնությունների համար կիրառված ընթացակարգերի արդյունքում արձանագրված խեղաթյուրումների և անհամապատասխանությունների հանրագումարը, ինչպես նաև ամբողջ բազմության համար խեղաթյուրումների և անհամապատասխանությունների գնահատված արժեքը ներկայացված է աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6.

Ըստ հաշվետվության աշխատավարձ				ԱԻՆ-ի կողմից		սխալի տեսակարար կշիռը ընտրանքի մեջ		սխալի գնահատված մեծություն ամբողջ բազմության համար	
ՀՀ	Գործարքի տեսակ	ԱԻՆ հաշված	Հաշվեքննություն	ավել վճարված, դրամ	պակաս վճարված, դրամ	ավել վճարված, տոկոս	պակաս վճարված	ավել վճարված, դրամ	պակաս վճարված

1	գործակցի սխալ կիրարկման հետևանքով ավելի հաշվարկված պարգևավճար	80,408,969	76,584,466	3,824,502	-	1.09%	-	124,971,910	-
2	գործակցի սխալ կիրարկման հետևանքով ավելի հաշվարկված աշխատավարձ	349,814,680	345,414,566	4,400,114	-	1.26%	-	143,780,965	-
3	անաշխատու-նակության թերթիկ	1,111,955	1,076,899	35,056	-	0.01%	-	1,145,503	-
4	արձակուրդային	0	5,765,921	337,964	6,103,885	0.10%	1.74%	11,043,542	199,454,493
Ընդամենը								280,941,921	199,454,493
Ընդամենը խեղաթյուրումների և անհամապատասխանությունների գնահատված արժեքը								**468,207,369**	

Ելնելով ներկայացված աղյուսակի տեղեկատվութունից, խեղաթյուրումների և անհամապատասխանությունների գնահատված ընդհանուր արժեքը կազմել է 468,207.4 հազ. դրամ, որից.

- Անաշխատունակության թերթիկի և արձակուրդային վճարների համար գնահատված սխալի մեծությունն ամբողջ բազմության համար կազմել է 12,189.045 դրամ:
- Պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակցի, սխալ կիրարկման հետևանքով սխալի գնահատված մեծությունն ամբողջ բազմության համար ավելի վճարված պարգևավճարի գումարը գնահատվել է 124,971,910 դրամ,
- Պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակցի, սխալ կիրարկման հետևանքով սխալի գնահատված մեծությունն ամբողջ բազմության համար ավելի վճարված աշխատավարձի գումարը գնահատվել է 143,780.965 դրամ,
- ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, ինչպես նաև 192-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները չպահպանելու հետևանքով գնահատված մեծությունն ամբողջ բազմության համար արձակուրդային պակաս է վճարվել 199,454,493 դրամ:

5.2 Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին

«Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով Պետական բյուջեից 2020թ. նախատեսվել է հատկացնել 1,415,291,600.0 հազ. դրամ, փաստացի և դրամարկղային ծախսը կազմել է 1,415,291,600.0 հազ. դրամ:

Հոդվածի շրջանակներում Նախարարության և վերջինիս ենթակայության տակ գործող ոչ առևտրային կազմակերպությունների միջև կնքվել է դրամաշնորհի թվով 9 պայմանագրեր:

Աղյուսակ 7.

դրամ

	Ստացողի անվանումը	Պայմանագրի գումար	Վճարված գումար	Նպատակ
1	Սեյսմիկ պաշտպանության արևելյան ծառայութուն ՊՈԱԿ	82,201,800.0	82,201,800.0	Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն
2	Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն ՊՈԱԿ	736,819,300.0	736,819,300.0	Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն
3	Պահուստ ՊՈԱԿ	189,910,700.0	189,910,700.0	Պետական ռեզերվների գործակալության համակարգի հիմնարկների պահպանում
4	Լազուր ՊՈԱԿ	137,810,100.0	137,810,100.0	Պետական ռեզերվների գործակալության համակարգի հիմնարկների պահպանում
5	Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն ՊՈԱԿ	46,297,200.0	46,297,200.0	Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ
6	Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն ՊՈԱԿ	54,000,000.0	54,000,000.0	Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ
7	Աղետների բժշկության կենտրոն ՊՈԱԿ	18,707,700.0	18,707,700.0	Արտակարգ իրավիճակներում բուժօգնության ծառայություններ
8	Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա ՊՈԱԿ	126,283,600.0	126,283,600.0	Կադրերի պատրաստման և վերապատրաստման ծառայություններ
9	Ռուս- հայկական մարդասիրական արձագանքման կենտրոն ՄՈԱԿ	23,261,200.0	23,261,200.0	Պետական աջակցություն ռուս-հայկական հումանիտար արձագանքման կենտրոնին
	Ընդամենը	**1,415,291,600.00**	**1,415,291,600.00**	

«Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով ծախսը կատարվել է Նախարարության ենթակայության տակ գործող կազմակերպությունների կողմից, իսկ ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 18-ի թիվ 973-Ա, 974-Ա, 975-Ա, 976-Ա որոշումներով լուծարվել են «ԼԱԶՈՒՐ», «ՊԱՀՈՒՍՏ», «ԱՂԵՏՆԵՐԻ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» և «ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-ները:

Հաշվեքննիչ պալատի 2021թ. մարտի 19-ի թիվ 66-Ա որոշման համաձայն Հաշվեքննիչ պալատը ստուգում է իրականացրել «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում:

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում իրականացված ստուգման արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանություններն ու խեղաթյուրումները

- Պակաս է հաշվարկվել և վճարվել 437.3 հազ. դրամ ավելացված արժեքի հարկ, իսկ պակաս վճարված ավելացված արժեքի հարկի մասով տույժի գումարը կազմել է շուրջ 75.2 հազ. դրամ:

ՊՈԱԿ-ի դիրքորոշում: *ՊՈԱԿ-ի կողմից 2020թ մարտ ամսվա ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում ԱԱՀ-ի հարկման բազան 2186.2 հազ. դրամի չափով պակաս հայտարարագրումն արդեն իսկ ճշգրտվել է, որի արդյունքում պետական բյուջե վճարվել է 437.3 հազ. դրամ հարկ և նշված ԱԱՀ-ի մասով հաշվարկված համապատասխան տույժի գումարը, որը ճշգրտման օրվա դրությամբ կազմել է 42.452 ՀՀ դրամ:*

Հաշվեքննողի արձագանք: *Ընդունվել է ի գիտություն:*

- ՊՈԱԿ-ը չի հանդիսացել էլեկտրոէներգիայի, գազի, ջրամատակարարման բաժանորդ և հաստատված նախահաշվում վերոնշյալի գծով ծախս չի նախատեսել:

ՊՈԱԿ-ի դիրքորոշում: *ՀՀ կառավարության 2005թ դեկտեմբերի 29-ի «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ ստեղծելու և նրա կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 2334-Ն որոշման 5-րդ կետով Երևան քաղաքի Ջրաշատ 1 (ներկայիս Սարմենի 1) հասցեում համապատասխանաբար 800քմ հատկացված տարածքը, որը հանդիսացել է ՊՈԱԿ-ի իրավաբանական և գործունեության հասցեն, ՀՀ կառավարության 01.06.2017 թվականի «Գույք հետ վերցնելու մասին» թիվ 583-Ա որոշմամբ հետ է վերցվել և գործունեության համար մինչ այժմ որևէ տարածք չի հատկացվել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱԻՆ հանդիսանում է ՊՈԱԿ-ի լիազոր մարմինը, ուստի վերը նշվածով պայմանավորված ՊՈԱԿ-ը գործունեությունը ծավալում է ԱԻՆ-ի վարչական շենքում: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հիմնադրի կողմից ՊՈԱԿ-ին տարածք հատկացված չէ, այդ հիմքով ՊՈԱԿ-ի նախահաշվով ԱԻՆ-ի վարչական շենքում զբաղեցրած տարածքի համար կոմունալ վճարներ և այլ ծախսեր նախատեսված չեն:*

Հաշվեքննողի արձագանք: *Չի ընդունվել, քանի որ ՊՈԱԿ-ը հանդիսանում է առանձին կազմակերպություն, ունի առանձին հաշվեկշիռ, հետևաբար ծախսերի հաշվառումը ևս պետք է իրականացներ առանձին:*

- ՊՈԱԿ-ի և Վեդու համայնքապետարանի հետ կնքված պայմանագիրը նոտարական վավերացում չի ստացել:

<u>Կանոնադրական և օրենսդրական խնդիրներ</u>

- ՀՀ կառավարությունը հաշվետու ժամանակահատվածում արտադրական վտանգավոր օբյեկտների առանձին խմբերի համար փորձաքննության իրականացման պարբերականության ավելի երկար ժամկետներ չի սահմանել:
- Հաշվետու ժամանակահատվածում հավատարմագրված կազմակերպությունների կողմից իրականացված փորձագիտական փորձաքննության որևէ օրինակ ՊՈԱԿ-ին չի ներկայացվել:
- Արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրի վարումը պատշաճ չի իրականացվել, իսկ տվյալների գրանցումը և վարումը իրականացվել է «excell» ֆայլի միջոցով, առանց անվտանգության և տվյալների պահպանման որևէ հատուկ գործիքի կիրառման, ինչը տվյալների կորստի, վերախմբագրման կամ արհեստական ավելացման ռիսկեր է պարունակել: Ավելին, ռեեստրի փաստացի ձևաչափում արձանագրվել են տվյալների մուտքագրման բազմաթիվ շեղումներ և կամայական ձևակերպումներ, ինչը հնարավորություն չի տվել վերլուծել, խմբավորել, դասակարգել, կամ նույնիսկ ճշգրիտ համարակալել առկա տեղեկատվությունը:
- ՀՀ կառավարության էլեկտրոնային կառավարման հարթակում (e-gov.am) հրապարակված ռեեստրը ևս որպես փաստաթուղթ պատշաճ վիճակում չի եղել՝ փաստաթուղթը չի ունեցել անվանում կամ վերնագիր, ամսաթիվ, չի պարունակել սահմանված պարտադիր վավերապայմաններ, հաստատման կամ մշակման մասին տեղեկատվություն և չի համապատասխանել ՀՀ կառավարության 04.03.2010թ. թիվ 198-Ն որոշմամբ սահմանված պաշտոնական փաստաթղթերի համար սահմանված նվազագույն վավերապայմաններին:
- Հրապարակված ռեեստրի տվյալների համաձայն 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ-ում գրանցված է թվով 22 767 արտադրական վտանգավոր օբյեկտ (թիվը չի համապատասխանում վարվող ռեեստրի տվյալների հետ, որը

փաստացի եղել է 19 711), որոնք բոլորը ենթակա են պարբերական փորձաքննության, նվազագույնը տարեկան 1 անգամ: Ստուգմամբ արձանագրվել է, որ 2020թ. փորձաքննություն է անցել կամ դրական փորձագիտական եզրակացություն է ստացել ընդամենը 13 010 արտադրական օբյեկտ, փաստացի 6 701 վտանգավոր օբյեկտ փորձաքննություն չի անցել, որոնք նվազագույնը տարեկան մեկ անգամ ենթակա են պարտադիր փորձաքննության, համապատասխան փորձաքննություն չանցնելով շարունակել են շահագործվել: Միաժամանակ, ռեեստրում պատշաճ կերպով չի լրացվել արտադրական վտանգավոր օբյեկտների կոնսերվացման մասին տվյալները:

- ՀՀ կառավարության կողմից չի սահմանվել պարտադիր ապահովագրման ենթակա առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտների ցանկը, կազմակերպություններն իրենց գործունեությունն իրականացրել են առանց պարտադիր ապահովագրություն ունենալու:
- Չի պահպանվել ՊՈԱԿ-ի կանոնադրության 18-րդ կետի պահանջները՝ Լիազոր մարմնի կողմից հաստատված խորհուրդ չի եղել, չի եղել որևէ արձանագրություն խորհրդի կողմից նիստեր գումարելու վերաբերյալ, ինչի հետևանքով խորհուրդը փաստացի չի իրականացրել կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթներն ու լիազորությունները:
- Չի իրականացվել ՊՈԱԿ-ի կանոնադրության 18-րդ կետով խորհրդին վերապահված կենտրոնի տնօրենի գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողությունը, կենտրոնի շահույթի տնօրինման ուղղությունների սահմանումը և ՊՈԱԿ-ի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը:
- Չի քննարկվել և չի հաստատվել նաև ՊՈԱԿ-ի տարեկան հաշվեկշիռը, տնօրենի և ՊՈԱԿ-ի տարեկան հաշվետվությունները, հավանության չի արժանացել ՊՈԱԿ-ի կառուցվածքը, ստորաբաժանումների կանոնադրությունները և այլն:
- ՊՈԱԿ-ի կանոնադրության 34-րդ կետի համաձայն չի հաստատվել ՊՈԱԿ-ի կառուցվածքը, ոչ մի կառուցվածքային ստորաբաժանում չի ունեցել հաստատված կանոնադրություն, բացակայել են իրավական հիմքերը ստորաբաժանումների կողմից իրականացվող գործառույթների հստակ սահմանման, իրավունքների և պատասխանատվությունների տարանջատման վերաբերյալ:
- Կանոնադրության 10-րդ կետի համաձայն ՊՈԱԿ-ի կողմից 2006թ-ից սկսած մշակվել է ընհանուր 42 հատ տեխնիկական կանոնակարգ, որից ընդամենը 13-ն է հաստատվել ՀՀ կառավարության կողմից: Ավելին, վերջին անգամ տեխնիկական կանոնակարգ հաստատվել է 2012թ.:

ՊՈԱԿ-ի դիրքորոշում: *ՊՈԱԿ-ի կանոնադրության 18-րդ կետով նախատեսված խորհուրդը ստեղծվել է լիազոր մարմնի կողմից: Սակայն 2020թ երկրում հայտարարված արտակարգ դրության և ռազմական դրության պայմաններում խորհրդի նիստերը չեն գումարվել:*

Հաշվեքննողի արձագանք: *Չի ընդունվել, քանի որ նախ արտակարգ դրություն չի եղել ամբողջ տարվա ընթացքում, և միևնույն ժամանակ դրանք հնարավոր էր իրականացնել նաև հեռավար եղանակով:*

<u>Աշխատանքի վարձատրության խնդիրներ</u>

- 2020թ. ընթացքում ՊՈԱԿ-ն ունեցել է հաստիքացուցակով նախատեսվածից միջինը 52-ով ավելի հաստիք:
- Հաստատված հաստիքացուցակով նախատեսված է եղել ընդամենը վարորդի մեկ հաստիք, ասկայն, ՊՈԱԿ-ը փաստացի 2020թ. ունեցել է 7 վարորդ:
- Հաստատված հաստիքացուցակով տնօրենի խորհրդական նախատեսված չի եղել, սակայն ՊՈԱԿ-ը փաստացի մինչև 2020թ. ապրիլի 30-ը ունեցել է խորհրդականի 1 հաստիք՝ ամսական 350.0 հազ. դրամ աշխատավարձով:
- ՊՈԱԿ-ի նախահաշվով լրավճարներ և պարգևավճարներ չեն սահմանվել, սակայն տնօրենի հրամանով վճարվել է 17,218 հազ. դրամի լրավճար և 14,756 հազ. դրամի պարգևավճար:
- 2020թ ապրիլ ամսին աշխատակիցներին տրամադրվող ամսական լրավճարների հաշվարկման ժամանակ հրամանով սահմանված 4,794 հազ. դրամի լրավճարները վճարվել են առանց հարկերը նվազեցնելու:
- ՀԾ համակարգ տվյալները ոչ ճիշտ մուտքագրելու հետևանքով թվով 5 աշխատակիցների համար կատարվել է 17,989 դրամի չափով ավելի կամ պակաս վճարում:

ՊՈԱԿ-ի դիրքորոշում: *06.02.2020թ N 27-Ա, 13.04.2020թ N 169-Ա, հրամանների և փաստացի հաշվարկված լրավճարների տարբերությունները պայմանավորված են արձակուրդների, չվճարվող արձակուրդների հաշվարկների հետ: Այն աշխատակիցները, որոնք համապատասխան տաբելների գտնվել են արձակուրդում, չվճարվող արձակուրդում, այդ օրերի համար հաշվարկված գումարները համապատասխանաբար հրամանով սահմանված լրավճարների գումարից նվազեցվել է:*

<<Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրենի 28.12.2020թ <<Պարգևատրում տրամադրելու մասին>> թիվ 355- Ա հրամնով ՊՈԱԿ-ի աշխատակիցների ընդհանուր պարգևատրման գումարը հաշվարկվել է 2 հաշվարկով պարգևատրում՝ և պարգևատրման լրավճար: ՀԾ համակարգի աշխատավարձի փաստաթղթերի մատյանում 811.0 հազ. դրամը հստակ արտացոլվել է որպես պարգևատրման լրավճար, իսկ ՀԾ համակարգի շախմատաձև հաշվետվության մեջ արտացոլվել է լրավճարի հաշվարկում, ինչով էլ պայմանվորված է առկա տարբերությունը:

2020թ ապրիլ ամսին աշխատակիցներին տրամադրվող լրավճարների հրամանը սահմանվել է առանց հարկերի և պարտադիր վճարների այդ իսկ պատճառով հաշվարկման ժամանակ հարկերը չի նվազեցվել: ՀԾ համակարգում լրավճարների հաշվարկը մուտքագրված և հաշվարկված է ներառյալ հարկերը և պարտադիր վճարները և համապատասխանաբար արտացոլված է եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկում:

ՀԾ ծրագրում կտրվի 2020թ մարտ ամսվա աշխատավարձի ճիշտ մուտքագրում և կվերահաշվարկվի ապրիլ ամսից սկսած աշխատակիցների արձակուրդային և վերջնահաշվարկի գումարները: ՊՈԱԿ-ի կողմից ստուգման ընթացքում կատարվել է ճշգրտում 2020թ հունվար ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկում և նվազեցվել համապատասխանաբար 65.6 հազ. դրամ եկամտային հարկ, 7140 դրամ սոցիալական վճար, 1000 դրամ դրոշմանիշային վճար:

Հաշվեքննողի արձագանք: *ՊՈԱԿԻ-ի պարզաբանումներն ընդունվել են ի գիտություն, սակայն անհրաժեշտ է հսկողություն սահմանել բացառելով հետագա անհամապատասխանությունները և խեղաթյուրումները:*

5.3 Գրասենյակային նյութեր և հագուստ

ՀՀ ԱԻՆ ՓԾ տարեկան ճշտված պլանով գրասենյակային նյութեր և հագուստ հոդվածով նախատեսվել է հատկացնել 113,082.3 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 112,703.2 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 85,629.5 հազ. դրամ:

01.01.2020-31.12.2020թթ. ժամանակահատվածում Նախարարության կողմից հանդերձանքի ձեռք բերման նպատակով 18 անվանում ապրանքների համար 107,849.4 հազ. դրամ արժեքով կնքվել է 11 պայմանագրեր, որն ամբողջությամբ մատակարարվել է:

<u>Հանդերձանքի տրամադրման գործընթացի հաշվառման ռիսկեր</u>

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ փրկարար ծառայողներին հանդերձանքի տրամադրումն հաշվառումը իրականացվել է թղթային եղանակով, մատյանների և անհատական թերթիներում նշումներ կատարելու միջոցով, ինչը ոչ միայն աշխատատար է, այլև սխալվելու և անհամապատասխանությունների առաջացման էական ռիսկեր է պարունակել:

Միաժամանակ, թե անհատական քարտերը և թե գրանցման մատյանները պահպանվել են Փրկարար ծառայության ԹՆԱՎ վարչությունում, ինչը ևս հանդերձանքի տրամադրման հսկողության տեսանկյունից կարող է էական խեղաթյուրումների ռիսկեր առաջացնել: Ավելին, հաշվառման գործընթացը քարտային եղանակով կազմակերպելու արդյունքում լրացուցիչ դժվարություններ են առաջանում պլանավորման աշխատանքների ճշգրիտ կազմակերպման համար: Օրինակ՝ բյուջետային հայտի ճշգրիտ հաշվարկման համար անհրաժեշտ է տվյալները հավաքագրել շուրջ 3400 անհատական թերթիկներից, Նույն խնդիրն առկա է նաև հանդերձանքի ձեռքբերման ժամանակ չափի և տեսակի հստակ պլանավորման տեսանկյունից:

<u>Պլանավորման գործընթացի խնդիրներ</u>

2020-2022թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի (ՄԺԾԾ) հայտի համաձայն հանդերձանքի համար հաշվարկվել է ընդամենը 411,684.0 հազ. դրամ: Հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 02.02.2006թ. «Փրկարարական ծառայության համազգեստի ձևի տալու կարգը և օգտագործման ժամկետները սահմանելու մասին» թիվ 249-Ն որոշմամբ սահմանված նորմաների հիման վրա: Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ՄԺԾԾ և բյուջետային հայտի կազմման ժամանակ հաշվի չի առնվել տարեսկզբի ապրանքային մնացորդները, ՄԺԾԾ հիմքում ընկած ցուցանիշների համար հաշվարկները իրականացվել են Փրկարար ծառայողների թվի հիման վրա, ընդհանրական հաշվարկի սկզբունքով:

Աղյուսակ 8.

Հազ.դրամ

	N	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.
2020-2022 թթ. ՄԺԾԾ, 02.02.2006թ. ՀՀ կառավարության թիվ 249-Ն որոշմամբ սահմանված նորմաների հիման վրա, հազ. դրամ	(1)	375,976.0	761,316.0	826,588.1	411,684.0
Բյուջետային հայտով նախատեսված հազ. դրամ	(2)	82,716.3	99,716.0	94,216.0	94,216.0
Բյուջեից փաստացի հատկացված միջոցներ հազ. դրամ	(3)	82,716.3	94,716.0	94,216.0	94,216.0
Բյուջետային հայտով նախատեսված ֆինանսավորման տեսակարար կշիռը ՄԺԾԾ-ի նկատմամբ	(4)=(2)/(1)*100	22.0	13.1	11.4	22.9
Բյուջեից փաստացի հատկացված	(5)=(3)/(1)*100	22.0	12.4	11.4	22.0

միջոցների տեսակարար կշիռը ՄԺԾԾ-ի նկատմամբ	%				

Միաժամանակ, Փրկարար ծառայության ԹՆԱՎ վարչության կողմից չի ներկայացվել նաև հիմնավորում բյուջետային հայտով ներկայացված հանդերձանքի գումարի համար, որը ևս մեկ անգամ փաստում է հաշվառման գործընթացը թղթային ձևաչափով /մատյաններով և անհատական քարտերով/ կազմակերպելու խնդիրների մասին: Արդյունքում, ինչպես երևում է Աղյուսակ 8-ից ՄԺԾԾ-ով նախատեսված և պետական բյուջեից հատկացված ֆինանսավորման մեջ առաջացել է շուրջ 5 անգամ տարբերություն, որը շարունակվել է վերջին 5 տարիների ընթացքում:

<u>«Գրասենյակային նյութեր և հագուստ» հոդվածով ընտրանքի համար իրականացված ընթացակարգերի վերաբերյալ</u>

Հանդերձանքի 2020թ. 12 ամիսների շարժի վերաբերյալ ՀԾ հաշվետվության վերլուծությունից երևում է, որ հաշվառման ցանկում առկա 51 անվանումից մուտքագրում է արձանագրվել 25 անվանումներում, որի ընդհանուր գումարը կազմել է 107,913.4 հազ. դրամ: Ծախսերի և ելքագրումների համապատասխանության գնահատման նպատակով իրականացված ընտրանքը բաղկացած է 18 անվանումներից: Հաշվեքննության ընթացքում արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ: Մասնավորապես.

- Պետության կարիքների համար հանդերձանքի մատակարարման պայմանագրերի անբաժանելի մաս համարվող հավելվածներում՝ հանձնման-ընդունման արձանագրություններում, ապրանքի հանձնելու վերաբերյալ ակտերում, որոշ դեպքերում, բացակայել են համարակալումը և ամիս-ամսաթիվը: Օրինակ՝ «Օբորոն տեքստիլ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված «Գոտի քողարկվող համազգեստի» հանդերձանքի հանձնման-ընդունման արձանագրությունում բացակայել է համարը և ամիս-ամսաթիվը, իսկ ապրանքի հանձնելու վերաբերյալ ակտում՝ համարը:
- Նյութական արժեքների անվանումները և/կամ չափի միավորները պայմանագրերին կից տեխնիկական բնութագրերում, հարկային հաշիվներում, ՀԾ-ի կողմից տրամադրված հաշվետվության մեջ չի համապատասխանել ՓԾ կողմից իր ծրագրից տրամադրվածին: Նույն ապրանքը որոշ դեպքերում ՀԾ-ում մուտքագրվել է տարբեր կոդերով, տարբեր տողերում, տարբեր հոդվածներում: Օրինակ՝ «Աբի» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի տեխնիկական բնութագրում և իր կողմից դուրս գրված թվով 2 հարկային հաշիվներում տարբեր ամիսներին մատակարարված ապրանքի անվանումը նշվել է՝ «Հատուկ հանդերձանք և պարագաներ (Քողարկող համազգեստի լրակազմ)», ՀԾ-ով մուտքագրվել է մեկ դեպքում՝ «Համազգեստ քողարկվող/հանդերձանք հատուկ և պարագաներ լրակազմ/», 2-րդ դեպքում՝ «Համազգեստ Հատուկ հանդերձանք և պարագաներ/Քողարկվող համազգեստի լրակազմ/», որոնք հաշվառվել են ՀԾ-ի տարբեր կոդերով և տարբեր տողերում, ՓԾ-ում մուտքագրվել է՝ «Քողարկող համազգեստ՝ բաճկոն, տաբատ, կեպի»:

- «Գ.Ղ.» Ա/Ձ-ի հետ կնքված պայմանագրի տեխնիկական բնութագրում և հարկային հաշվում, որպես անվանում նշվել է՝«Ճտքավոր կոշիկներ», իսկ չափի միավորը՝ հատ: ՀԾ և ՓԾ հաշվետվություններում հաշվառվել է «Կոշիկ ճտքավոր», իսկ չափի միավորը՝ զույգ:

Հանդերձանքի շարժի վերաբերյալ ՀԾ հաշվետվության վերլուծությունից երևում է, որ ընդամենը 40 անվանումից ելքագրման արդյունքում հաշվապահորեն ծախս է ձևակերպվել 32,914.4 հազ. դրամը: Ծախսերի բազմությունը բաղկացած է ընդամենը 1318 գործառնություններից, որից 500.0 հազ. դրամը գերազանցում է թվով 12 գործառնություններ 9,662,276 դրամ գումարով, որոնք ընտրվել են որպես համեմատաբար խոշոր առանձին գործառնություններ փաստաթղթերի համապատասխանության գնահատման համար: Մնացած 1306 (1318-12) գործառնություններից պատահականության սկզբունքով ընտրվել են ևս 20 գործառնություններ՝ 65 միավոր միջակայքով (1306/20=65.1), ինչի արդյունքում դիտարկվող ընտրանքը կազմել է ընդամենը 32 գործառնություն:

Հիմնավորող փաստաթղթերի հաշվեքննության արդյունքում պարզվել է, որ 14.01.2020թ. ելքի կարգագիր 20-17–ում որպես հիմք նշված է 15.01.2020թ. թիվ Ն/1191 գրությունը, այսինքն հայտնաբերվել է հիմքը 1 օր ուշացնելու անհամապատախանություն:

Հաշվեքննության ստանդարտին համաձայն կատարված ընտրանքի հիման վրա կիրառված ընթացակարգերի արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

1. Նյութական արժեքների անվանումները և/կամ չափի միավորները ՀԾ-ի կողմից տրամադրված հաշվետվության մեջ չի համապատասխանել ՓԾ կողմից իր ծրագրից տրամադրվածին: Օրինակ՝ ՀԾ-ում որպես անվանում նշվել է «Համազգեստ Հատուկ հանդերձանք և պարագաներ/Քողարկվող համազգեստի լրակազմ/», իսկ չափի միավորը՝ հատ, սակայն ՓԾ ծրագրում նշվել է՝ «Ամենօրյա համազգեստ՝ բաճկոն, տաբատ, կեպի/պիլոտկա» անվանումը և չափի միավորը՝ լրակազմ: Ի լրումն վերը նշված համազգեստի ձեռք բերման հաշիվ ապրանքագրում նշվել է՝ «Հատուկ հանդերձանք-պարագաներ (ամենօրյա համազգեստ)», չափի միավորը՝ հատ: ՀՀ կառավարության 10.08.2017թ. և 30.04.2020թ.՝ «Փրկարարական ծառայության համազգեստի ձևը, տալու կարգը և օգտագործման ժամկետները սահմանելու մասին» N 979-Ն և N 668-Լ որոշումների հավելված 2-ով որպես չափի միավոր է հանդիսացել հատը կամ լրակազմը: Կատարված ընտրանքում ներառված 32 գործառնություններից 22-ում արձանագրվել է անվանումների և/կամ քանակների անհամապատասխանություններ:

   Հաշվապահական փաստաթղթերում լրակազմով հաշվառումը կարող է առաջացնել խնդիրներ, օրինակ երբ ծառայության ընթացքում լրակազմի բաղադրիչներից վնասվելու դեպքում սահմանված կարգով մասնակի փոխարինման դեպքում կառաջանա հաշվառման խնդիր:
2. Երկու դեպքով արձանագրվել է անհամապատասխանություն հանդերձանքի տրամադրման ժամկետի ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված ժամկետների միջև: Այսպես վերջին անգամ Ա. Ղ. «Բաճկոն ձմեռային» ստացել է 18.09.2013թ.-ի, մինչև 03.11. 2019թ. չի ստացել 7 տարի, այն դեպքում, երբ պետք

է կառավարության որոշման համաձայն ստանար 3 տարի հետո: Ուսադիր չի ստացել 2014-2015թթ., այնինչ կառավարության որոշման համաձայն պետք է ստանար տարին մեկ անգամ:

13.12.2019թ.-ի N1381-Ա հրամանով Ս. Ա. շնորհվել է լեյտենանտի կոչում, սակայն տոնական համազգեստը ստացել է 18.03.2020թ.-ին: Ամենօրյա համազգեստ կանաչ ստացել է 08.05.2019թ.-ն, որից հետո ստացել է 29.10.2020թ.-ին կամ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվածից՝ 6 ամիս ուշ:

3. ՀՀ կառավարության 10.08.2017թ. «Փրկարարական ծառայության համազգեստի ձևը, տալու կարգը և օգտագործման ժամկետները սահմանելու մասին» թիվ 979-Ն որոշմամբ չի սահմանվել դրույթ փրկարար ծառայողի բացատրության կամ նրա անմիջական հրամանատարների (պետերի) զեկուցագրերի հիման վրա արտակարգ իրավիճակների կամ դեպքի վայրում վնասված, ժամկետից շուտ շարքից դուրս եկած, հետագա օգտագործման համար ոչ պիտանի համազգեստի դուրս գրման և փոխարինման վերաբերյալ:

ՀՀ կառավարության 30.04.2020թ. «Փրկարարական ծառայության համազգեստի ձևը, տրամադրման կարգը և օգտագործման ժամկետները սահմանելու մասին» թիվ 668-Լ որոշման 23 կետով սահմանվել է, որ արտակարգ իրավիճակների կամ դեպքի վայրում վնասված, ժամկետից շուտ շարքից դուրս եկած, հետագա օգտագործման համար ոչ պիտանի համազգեստի դուրս գրումը և փոխարինումը կատարվում է փրկարարական ծառայողի բացատրության կամ նրա անմիջական հրամանատարների (պետերի) զեկուցագրերի հիման վրա:

2020թ. ընթացքում թվով 12 զեկուցագրերի համաձայն որոշումներով սահմանված ժամկետներից շուտ հանդերձանք է հատկացվել թվով 117 ՓԾ աշխատակիցների գումարով 1,052,744 դրամի, այդ թվում՝ մինչև նոր որոշման ուժի մեջ մտնելը՝ թվով 6 դեպքով զեկուցագրերի համաձայն հանդերձանք է հատկացվել թվով 6 աշխատակիցների 60,081 դրամ գումարով: Ստացվում է, որ մինչև ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ կատարելը 6 դեպքով սահմանած ժամկետից շուտ՝ առանց հիմնավորման հանդերձանք է հատկացվել:

Հանդերձանքի տարեկան շարժի վերաբերյալ ՀԾ հաշվետվության վերլուծությունից երևում է, որ ընդամենը 51 անվանումից ելքագրման արդյունքում հաշվապահորեն ծախս է ձևակերպվել 81,027.7 հազ. դրամ: Ծախսերի բազմությունը բաղկացած է ընդամենը 1773 գործառնություններից: 2020թ. հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսների ծախսերի բազմությունը բաղկացած է ընդամենը 455 գործառնություններից: 2020թ. վերջին 3 ամիսների ընթացքում կատարված ծախսերից 500.0 հազ. դրամը գերազանցել է թվով 27 գործառնություններ 35,939.5 հազ. դրամ գումարով, որոնք ընտրվել են որպես համեմատաբար խոշոր առանձին գործառնություններ՝ փաստաթղթային ստուգման համար: Մնացած 428 (455-27) գործառնություններից պատահականության սկզբունքով ընտրվել են ևս 10 գործառնություններ՝ 43 միավոր միջակայքով (428/10=43): Ընտրվել է ևս 10 գործառնություն 793.7 հազ. դրամ գումարով: Այսպիսով, 2020թ. վերջին 3 ամիսների ընտրանքը կազմել է ընդամենը 37 գործառնություն: Կատարված ընտրանքի հիման վրա կիրառված ընթացակարգերի արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

1. Ուսումնասիրված հանդերձանքի ելքի կարգագրերի բաշխման ցուցակներում շատ դեպքերում բացակայել է բաշխման ամիս ամսաթիվը, բաշխողի ստորագրությունը, որոշ դեպքերում քանակի սյան դիմաց դրվել է «+» նշան, կոնկրետ քանակ նշելու փոխարեն, որը հետևանք է այն բանի, որ Նախարարությունում բացակայել է ամրացման քարտերի, բաշխման ցուցակների և այլ տիպային ձևերի վերաբերյալ համապատասխան իրավական ակտը: Օրինակ 01.12.2020թ. թիվ 20-2141 ելքի կարգագրով ԵՓՎ 11 ՀՓՋ-ին հատկացված ճտքավոր կոշիկների բաշխման ցուցակներում քանակի սյան դիմաց յուրաքանչյուր ստացողի դիմաց դրվել է «+» նշան, այն դեքում երբ պետք է նշվեր յուրաքանչյուրի դիմաց 1 զույգ, բացակայել է բաշխման ամիս ամսաթիվը: 19.10.2020թ. թիվ 20-1837 կարգագրի հանդերձանքի բաշխման ցուցակում բացակայել է Շիրակի ՄՓՎ պետի ստորագրությունը:
2. 01.12.2020թ. թիվ 20-2139 կարգագրով ԹՆԱ պահեստից ՔՊՎ ՔՊ ուժերի հավաքական կենտրոնի թվով 25 ծառայողների ճտքավոր կոշիկ է հատկացվել սահմանված 2 տարի ժամկետից շուրջ 2 ամիս ուշացումով:
3. ՀՀ կառավարության 02.02.2006թ. թիվ 249-Ն «Փրկարարական ծառայության համազգեստի ձևի տալու կարգը և օգտագործման ժամկետները սահմանելու մասին» որոշմամբ սահմանված նորմաներով սահմանված համազգեստի օգտագործման ժամկետները ՀՀ կառավարության 30.04.2020թ.-ի «Փրկարար ծառայության համազգեստի ձևը, տրամադրման կարգը և օգտագործման ժամկետները սահմանելու մասին» թիվ 668-Լ որոշմամբ վերանայվելու արդյունքում երկարացվել և/կամ նվազեցվել են, սակայն անդրադարձ չեն կատարվել որոշման ընդունման պահին օգտագործման մեջ գտնվող համազգեստի հետագա օգտագործման ժամկետի հարցին: Եթե ճտքավոր կոշիկի համար մինչև որոշման մեջ փոփոխություն կատարելը օգտագործման ժամկետ էր սահմանվել 2 տարի, ապա փոփոխությունից հետո այն դարձել է 1 տարի: Օրինակ, Դիլիջանի ՀՓՋ սերժանտ Պ.Վ. նախկինում հատկացվել է ճտքավոր կոշիկ 05.12.2019թ.-ին և նոր հատկացում՝ 08.12.2020թ.-ին: Արդյունքում մեկ փրկարարի հաշվով ավելի ծախսը մեկ տարվա համար կազմել է 6500 դրամ (13000դրամ:2): Համապատասխանաբար ֆինանսական հետևանքը յուրաքանչյուր դեպքի համար կազմել է մոտ 13000 դրամ և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդանուր գումարը կազմել է 7,012.4 հազ. դրամ:
4. 31.12.2020թ.-ի դրությամբ փաստացի հանդերձանք կրողների թիվը կազմել է 3210 փրկարար ծառայող, որից՝ 1056-ը ստացել են ճտքավոր կոշիկ 2020թ. դեկտեմբեր ամսին: 2021թ.-ին ստացողների թիվը կկազմի շուրջ 2154: Ճտքավոր կոշիկների օգտագործման ժամկետի կրճատման հետևանքով 2021թ.-ին որոշման վերանայման արդյունքում կրած հավելյալ ծախսի գումարը կկազմի շուրջ 14,001,086 դրամ (2154x6500): Ընդամենը որոշման վերանայման արդյոնքում կրած հավելյալ ծախսի գումարը կկազմի 21,013,503 դրամ:
5. Գեղարքունիքի մարզի թիվ 30 Հատուկ ջրափրկարարական ջոկատի (ՀՋՋ) թվով 3 աշխատակիցների՝ Մ.Վ. (արհեստանոցի վարիչ), Մ.Կ. (արհեստանոցի ավագ տեխնիկ), Գ.Ա. (արհեստանոցի տեխնիկ) չհանդիսանալով փրկարար ծառայության ծառայողներ վերջիններիս 2020թ.-ի ընթացքում հատկացվել է

հանդերձանք ընդամենը 68487 դրամ գումարով: Վերը նշված թվով 3 աշխատակիցներն ըստ ամրացման քարտի հանդերձանք են ստացել 2015թ-ից մինչև 31.12.2020թ. ընկած ժամանակահատվածում:

Թվով 11 անվանում հանդերձանք պահեստ մուտքագրվել և հաշվառվել է 0, 1 կամ 2 դրամ պայմանական արժեքով

Որպես օգնություն ստացված հանդերձանքի տարեկան ՀԾ շարժի վերաբերյալ հաշվետվության վերլուծությունից երևում է, որ ընդամենը 33 անվանումից մուտքագրում է եղել 15 անվանումներում, որի ընդհանուր գումարը կազմել է 16,118.4 հազ. դրամ: Ընդ որում, 4 անվանումներում մուտքագրվել է արժեքով, որի գումարը կազմել է 16,118.4 հազ. դրամ, իսկ 11 անվանումը մոտքագրվել է 0, 1 կամ 2 դրամ արժեքով: Կատարված ընտրանքը մանրամասն փաստաթղթային ստուգման նպատակով ներառել է բոլոր 15 անվանումները: Ստորև ամփոփ ներկայացվել է հայտնաբերված թերությունները և անհամապատասխանությունները:

1. Նվիրատվության մուտքի փաստաթղթում առկա նյութական արժեքների անվանումները և/կամ չափի միավորները չի համապատասխանել ՀԾ-ի և ՓԾ ծրագրերից տրամադրվածին: Օրինակ՝ նվիրատվության վկայագրի հավելվածում ապրանքի անվանումը նշվել է՝ «Ձեռնոց, քիմ. պաշտպանություն, դիմացկուն ռետին., միջին չափս՝ 30 հատ և Ձեռնոց, քիմ. պաշտպանություն, դիմացկուն ռետին., մեծ չափս՝ 30 հատ» առանց արժեքի, իսկ ՀԾ, ՓԾ և մուտքի կարգագրում հաշվառվել է մեկ տողով՝ «Ձեռնոց» 60 զույգ:
2. Նվիրատվությամբ ստացված թվով 11 նյութական արժեքների արժեքը (գինը) կազմել է 0, 1 կամ 2 դրամ: Այդպիսի նյութական արժեքները չեն գնահատվել իրական արժեքներով: Օրինակ՝ «Արտահագուստ պաշտպանիչ ԿԽՄԿ» մուտքի փատաթղթում միավորի գինը՝ 0 դրամ, իսկ ՀԾ և ՓԾ-ներում այն կազմել է 1 դրամ:

Որպես օգնություն ստացված հանդերձանքի 2020թ. շարժի վերաբերյալ ՀԾ հաշվետվության վերլուծությունից երևում է, որ ընդամենը 33 անվանումից ելքագրման արդյունքում հաշվապահորեն ծախս է ձևակերպվել 92,525.8 հազ. դրամը: Ընդ որում 1,000.0 հազ. դրամից ավելի ծախսով անվանումները թվով 11-ն են, որոնց դրամային արտահայտությամբ ծախսը կազմել է 91,480.9 հազ. դրամ կամ ընդհանուրի 98.9%-ը (91,480.9/92,525.8): Կատարված ընտրանքը ներառել է 39 անվանում մանրամասն փաստաթղթային հաշվեքննություն: Ընտրանքի հիման վրա կիրառված ընթացակարգերի արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

1. Հիմնավորող փաստաթղթերի հաշվեքննության արդյունքում արձանագրվել է, որ ՀԾ-ով 01.01.2020թ.-ի դրությամբ «Սաղավարտ հրշեջի ԱՄՆ դեսպ.» 1 հատի արժեքը 199,723 դրամ մնացորդը կազմել է 68 հատ, որը տարվա ընթացքում ելքի կարգագրերով բաշխվել է: 02.03.2020թ. թիվ 20-393 ելքի կարգագրով ԹՆԱ պահեստից Արմավիրի մարզային փրկարարական վարչությանը հատկացված 6 հատը գումարով 1,198,338 դրամ հաշվապահորեն ծախսագրվել է 711029 հաշվին, այն դեպքում, երբ պետք է ձևակերպվեր 711021 հաշվին և միաժամանակ արտացոլվեր Ա-11 արտահաշվեկշռային հաշվին, ինչպես ձևակերպվել է մնացած 62 հատի դեպքում:

2. 11.12.2020թ. ելքի կարգագիր թիվ ե/կ-20-2207-ով ԹՆԱՎ պահեստից Նախարարության բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման վարչությանը՝ հիմքը որպես հասանելիք, հատկացվել է 8 անվանում 4,107,684 դրամ ընդհանուր արժեքով նյութական արժեքներ, այդ թվում՝ «Պաշտպանիչ համազգեստ ISTC» 180 հատ 1,722,420 դրամ գումարով, որը ՓԾ-ով հաշվառվել է, սակայն վերը նշված «Պաշտպանիչ համազգեստ ISTC» 180 հատ 1,722,420 դրամ գումարով նյութական արժեքը ՀԾ-ով չի հաշվառվել (հաշվառումից դուրս է մնացել) և նյութական արժեքների շրջանառության մատյանով չի ելքագրվել:

Նյութական արժեքների շարժի և մնացորդների 01.01.2020-31.12.2020թթ. ժամանակաշրջանի վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ 01.01.2020թ.-ի դրությամբ ձեռք բերված 89,536.4 հազ. դրամ գումարով 1896 տողերում (ընդամենը 4659 տողից, գումարով՝ 393,634.3 հազ. դրամ) նյութական արժեքների շարժ տեղի չի ունեցել: Ընդ որում՝ տարվա ընթացքում այդպիսի տողերի վրա մուտքագրվել է ևս 10 տող՝ գումարով 4,034.3 հազ. դրամ: Այսպիսով 31.12.2020թ. դրությամբ 93,570.8 (89,536.4+4,034.3) հազ. դրամ գումարով նյութական արժեքների մասով ելքագրում չի կատարվել, որը կազմել է ամբողջ մնացորդի 31.0 %-ը:

Ի լրումն վերը նշված շրջանառության մատյանում 1677 տողերում հաշվառվող նյութական արժեքները, որոնք ունեցել են քանակային մնացորդներ 01.01.2020թ. դրությամբ, չեն ունեցել գումարային արժեքներ: 31.12.2020թ. դրությամբ նյութական արժեքների շրջանառության մատյանում 3354 տողերում հաշվառվող նյութական արժեքները, որոնք ունեցել են քանակային մնացորդներ՝ չեն ունեցել գումարային արժեքներ:

ԱԻՆ դիրքորոշում 1: *ԱԻՆ ֆինանսատնտեսագիտական վարչության և ՓԾ թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության կողմից տրամադրված հաշվետվություններում առկա հանդերձանքի և չափման միավորների անվանումների տարբերությունը պայմանավորված է Ֆինանսների նախարարության կողմից հրապարակված միասնական ցանկի ծածկագրերի (CPV կոդերի) միատեսակ անվանումներով: Օրինակ՝ փրկարար ծառայողի ամենօրյա, քողարկող, աշխատանքային համազգեստները, ինչպես նաև դրանց ձմեռային տեսակները ցանկում նշվում են մեկ անվամբ՝ «Հատուկ հանդերձանք և պարագաներ»: Փրկարար ծառայությունը չի կարող տարբեր հանդերձանքների հաշվառումն իրականացնել միևնույն անվամբ՝ ինչպես նշվում է CPV կոդերի անվանացանկում:*

Հաշվեքննողի արձագանք 1: *Չի ընդունվել, քանի որ հաշվապահական հաշվառման ամբողջականության և շարունակականության ապահովման համար մուտքագրված ապրանքի անվանումը հաշվառման ողջ ընթացքում չպետք է ենթարկվի փոփոխության, որը բխում է նաև ՀՀՀՀՀՀՍ պահանջներից:*

ԱԻՆ դիրքորոշում 2: *Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության արձանագրությամբ ֆիքսված միայն մեկ դեպքը՝ կապված հանդերձանքի ելքի կարգագրի և դրա հիմքը հանդիսացող փաստաթղթի ամսաթվերի մեկ օրվա տարբերության հետ, առաջացել է փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգի (mulberry-2) ժամանակագրության հետևանքով, որտեղ հստակ երևում է հանդերձանք տրամադրելու վերաբերյալ գրության ամսաթիվը, որը համընկնում է ելքի կարգագրի ամսաթվի հետ: Մեկ օրվա տարբերությունն առաջացել է արդեն տպագրված փաստաթղթի ւ(րա գրիչով դրված ամսաթվի հետևանքով, ինչը որևէ խնդիր չի առաջացրել օրենքով սայիմանւ/ած կարգով հանդերձանքի բաշխման և հաշվառման գործընթացում:*

Հաշվեքննողի արձագանք 2: *Չի ընդունվել, քանի որ ներկայացված դեպքը միակն է ոչ թե ամբողջ հաշվառման գործընթացում, այլ ընտրանքի շրջանակներում և հաշվեքննությամբ արձանագրվել է ոչ թե առանձին դեպքը այլ էական խեղաթյուրումների և անհամապատասխանությունների առաջացման ռիսկը:*

ԱԻՆ դիրքորոշում 3: *ՓԾ ՃԿԱԿ 911 ահազանգման կենտրոնի հրահանգիչ (911 ավագ դիսպետչեր), ւի/ծ կապիտան Ա.Ղ. «Ձմեռային բաճկոնի» կրման ժամկետը լրացել է 18.09.2017թ (կրման ժամկետը՝ ըստ գործող Կառավարության որոշման՝ 4 տարի): 2017թ փրկարար ծառայությունում իրականացվել է միայն*

քողարկող համազգեստի բաշխում, որի մատակարարումն իրականացվել է դեկտեմբեր ամսին: Ամենօրյա փիրուզագույն համազգեստի՝ այդ թվում ձմեռային բաճկոնի, հաջորդ մատակարարումն իրականացվել է 2019թ ւիեպրվարին: Ա. Ղ. 2019թ օգոստոս ամսից գտնվել է ֆիզ. արձակուրդում և հանդերձավորվել է արձակուրդից վերադառնալուց հետո:

ՓԾ ՃԿԱԿ օպերատիվ հերթափոխի բաժնի հրահանգիչ, փ/ծ լեյտենանտ Ս. Ա. համազգեստի տրամադրման ուշացումը պայմանավորված է եղել հերթական խմբաքանակի մեջ տվյալ չափի բացակայությամբ:

Հաշվեքննողի արձագանք 3: *Չի ընդունվել քանի որ անկախ ներկայացված հանգամանքներից, չի պահպանվել ՀՀ կառավարության որոշման պահանջները:*

ԱԻՆ դիրքորոշում 4: *Որպես օգնություն ստացված ,,Սաղավարտ հրշեջի ԱՄՆ,, կարող է հաշվառվել և որպես հատուկ նպատակային /4269/ և գրասենյակային նյութեր, հագուստ /4261/ հոդվածներով, երկու դեպքում էլ ձևակերպումը ճիշտ է: Նկատի ունենալով հաշվեքննիչ արձանագրությունը կատարվել է ճշտում և վերոհիշյալ 6 հատը նույնպես ձևակերպվել է 4261 հոդվածով:*

Հաշվեքննողի արձագանք 4: *Ընդունվել է ի գիտություն, իսկ հաշվապահական հաշվառման ամբողջականության և շարունակականության ապահովման համար հետագայում ևս անհրաժեշտ է ապահովել նույն ապրանքատեսակի հաշվառումը բացառապես միևնույն հոդվածով և անվանմամբ, որը բխում է նաև ՀՀՀՀՀՀՍ պահանջներից:*

5.4Տրանսպորտային նյութեր

ՀՀ պետական բյուջեից «Տրանսպորտային նյութեր» հոդվածով 2020թ. նախատեսվել է հատկացնել 219,173.0 հազ. դրամ (ՓԾ՝ 203,898.2 հազ. դրամ, ԱԻՆ՝ 15,274.8 հազ. դրամ): 2020թ. փաստացի ծախսը կազմել է՝ 193,920.2 հազ. դրամ (ՓԾ՝ 180,515.9 հազ. դրամ, ԱԻՆ՝ 13,404.2 հազ. դրամ), իսկ դրամարկղային ծախսը՝ 218,920.6 հազ. դրամ (ՓԾ՝ 203,755.4 հազ. դրամ, ԱԻՆ՝ 15,165.1 հազ. դրամ):

Նախարարության «Տրանսպորտային նյութեր» հոդվածի գծով 2020թ. փաստացի ծախսը կազմել է 13,404.2 հազ. դրամ, սակայն հաշվապահական հաշվառման բաժնի կողմից ներկայացված տվյալների համաձայն՝ 13,716,2 հազ. դրամ, տարբերությունը՝ 312.0 հազ. դրամ, ընդ որում 2020թ. պահեստամասերի գծով ծախս չի իրականացվել:

ԱԻՆ դիրքորոշում: *Նախարարության 2020թ. վառելիքի ծախսի 312,0 ՀՀ դրամ տարբերությունը կապված է նուսխարարության պահեստից դիզելային վառելիքի տեղաշարժի հետ, որի ծախսի վերաբերյալ հիմնավորող փաստաթղթեր չկան: Դիզելային վառելիքի մնացորդը 312,0 ՀՀ դրամը երևում է գեներատորի պահեստում որպես մնացորդ:*

Հաշվեքննողի արձագանք: *Չի ընդունվել, քանի որ հնարաոր չի եղել գնահատել ծախսի արժանահավատությունը հիմնավորող փաստաթղթերի բացակայության պատճառով:*

Համաձայն տրամադրված ՆԱ շրջանառության մատյանի՝ պահեստամասերի պահեստի սկզբնական մնացորդը 01.01.2020թ. դրությամբ կազմել է 1,146.4 հազ. դրամ, 2020թ. ընթացքում ձեռք է բերվել 57.5 հազ. դրամի շարժիչի յուղ, 31.12.2020թ. դրությամբ վերջնական մնացորդը կազմել է 1,203.9 հազ. դրամ: Փաստորեն 2020թ. ընթացքում ըստ ՀԾ-ծրագրի Նախարարության պահեստից պահեստամասեր ընդհանրապես դուրս չեն գրվել:

ՓԾ «Տրանսպորտային նյութեր» հոդվածի գծով 2020թ. փաստացի ծախսը կազմել է 180,515.9 հազ. դրամ, սակայն համաձայն ՀԾ-ծրագրից արտահանված տվյալների՝ 218,673.7 հազ. դրամ (վառելիքի գծով՝ 189,462.0 հազ. դրամ, իսկ պահեստամասերի և յուղերի գծով՝ 29,211.7 հազ. դրամ), տարբերությունը՝ 38,157.8 հազ. դրամ:

Տրանսպորտային նյութերի փաստացի ծախսի արժանահավատությունը հնարավոր չի եղել գնահատել, քանի որ ՀԾ ծրագրում վառելիքի ծախսը ճիշտ չի ճանաչվել

Նախարարության՝ 13,404.2 հազ. դրամ և ՓԾ՝ 180,515.9 հազ. դրամ տրանսպորտային նյութերի փաստացի ծախսի արժանահավատությունը հնարավոր չի եղել գնահատել, քանի որ ՀԾ ծրագրում վառելիքի ծախսը ճիշտ չի ճանաչվել: Մասնավորապես, Նախարարությունը վառելիքի տարեկան փաստացի ծախսը 13,716.2 հազ. դրամ ճանաչել է եռամսյակային կտրվածքով ելքի կարգագրերի հիման վրա պահեստից ելքագրվող վառելիքի չափով, այնինչ ծախսը պետք է ճանաչվեր ծախսի համար հիմք հանդիսացող փաստաթղթերի՝ առկա ուղեգրերի հիման վրա, որտեղ նշվում է փաստացի ծախսած վառելիքի քանակը:

ՓԾ վառելիքի գծով փաստացի ծախսը 2020թ. հունվար և փետրվար ամիսների համար ՀԾ ծրագրում նույնպես ճանաչվել է ելքի կարգագրերի հիման վրա պահեստից ելքագրվող վառելիքի չափով՝ 21,191,2 հազ. դրամ, իսկ մնացած բոլոր ամիսների համար՝ ծախսը ճանաչվել է դեկտեմբեր ամսին՝ ՓԾ կողմից տրամադրված վառելիքի փաստացի ծախսերի ամփոփ հաշվետվության հիման վրա՝ 168,270.8 հազ. դրամ, և սա այն դեպքում, երբ ընդամենը ՓԾ վառելիքի գծով տարեկան փաստացի ծախսը կազմել է 189,462.1 հազ. դրամ:

ԱԻՆ դիրքորոշում: *2020թ, հունվար, փետրվար ամիսների ՓԾ վառելիքի փաստացի ծախսը հաշվառելու համար հիմք է ընդունվել ներկայացված ելքի կարգագրերը, իսկ մնացած ամիսների համար ծախսի ձևակերպումը կատարվել է հիմք ընդունելով վերջին եռամսյակի ամփոփ հաշվետվությունը և կից ներկայացված ծախսը հիմնավորող սկզբնական փաստաթղթերը, որի արդյունքում էլ առաջացել է արձանագրված տարբերությունը:*

Հաշվեքննողի արձագանք: *Չի ընդունվել, քանի որ փաստացի ծախսի հաշվառման համար անհրաժեշտ է հիմք ընդունել բացառապես ծախսը հիմնավորող փաստաթղթեր (ուղեգրերը):*

Մարդատար ավտոմեքենաների երթուղային թերթերը և տրանսպորտային միջոցների շահագործման քարտերը սահմանված կարգով չի լրացվել

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ սահմանված կարգով չի լրացվել մարդատար ավտոմեքենաների երթուղային թերթերը և տրանսպորտային միջոցների շահագործման քարտերը: Մասնավորապես, երթուղային թերթերում չի լրացվել վազքի ցուցիչի ցուցմունքները, դուրս գալու և վերադառնալու ժամը, վառելիքի մնացորդները ճիշտ չեն լրացվել որոշ դեպքերում լրացվել է ամսվա վերջի իսկ որոշ դեպքերում՝ ամսվա սկզբի մնացորդները հասանելիք վառելիքը ստանալուց հետո:

ԱԻՆ դիրքորոշում: *Երթուղային թերթերի և տրանսպորտային միջոցների շահագործման քարտերում հայտնաբերված բացթողումները և թերությունները վերացված են: 2021թ. ուժեղացվել է հսկողությունը ավտոմեքենաների շահագործման համար անհրաժեշտ փաստաթղթաշրջանառության հանդեպ:*

Հաշվեքննողի արձագանք: *Ընդունվել է ի գիտություն, կիրականացվի հետհսկողություն:*

Համաձայն ՀՀ կառավարության 17.02.2005թ. թիվ 194-Ն որոշման՝ Նախարարության համար ծառայողական մեքենաների թվաքանակ չի սահմանվել, սակայն աշխատակազմի ենթակայության տակ գտնվել է թվով 20 տրանսպորտային միջոց:

ՀՀ կառավարության 01.06.2005թ. թիվ 1001-Ն որոշմամբ սահմանվում է ՀՀ պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների և մոտոտրանսպորտի վառելիքի, յուղերի ու քսուքների ծախսի, ավտոդողերի վազքի և կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետների նորմաները, իսկ որոշման մեջ չընդգրկված և նոր մոդելի ավտոմեքենաների համար կարող են սահմանվել վառելիքի ծախսերի ժամանակավոր նորմաներ՝ մեկ տարի ժամկետով:

Նախարարության մեքենաների մի շարք մոդելներ ՀՀ կառավարության 01.06.2005թ. թիվ 1001-Ն որոշման մեջ ընդգրկված չեն եղել, ավելին, վերջիններիս համար նույնիսկ ժամանակավոր նորմաներ չեն սահմանվել: ԱԻՆ ՓԾ մեքենաների որոշ մոդելների համար ԱԻ նախարարի 06.04.2018թ. թիվ 339 հրամանով սահմանվել են վառելիքի նորմատիվներ, սակայն որոշ մոդելներ նույնիսկ այդ ցանկում ներառված չեն ինչպես նաև յուղերի ու քսուքների ծախսի, ավտոդողերի վազքի և կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետների նորմաներ ընդհանրապես չի սահմանվել: Համաձայն ՀՀ կառավարության 01.06.2005թ. թիվ 1001-Ն որոշման ժամանակավոր նորմաները սահմանվում են մեկ տարի ժամկետով, սակայն մինչ օրս նոր հրաման առկա չի եղել:

ԱԻՆ դիրքորոշում: *Մարդատար ավտոմեքենաների երթուղային թերթերը և տրանսպորտային միջոցների շահագործման քարտերի սահմանված կարգով լրացումը իրականացվում է 01.03.2021 թ-ից:*

ՀՀ կառավարության 01.06.2005թ-ի թիվ 1001-ն որոշմամբ սահմանվում է ՀՀ պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների և մոտոտրանսպորտի վառելիքի, յուղերի ու քսուքների ծախսի նորմաները, իսկ որոշման մեջ չընդգրկված և նոր մոդելների ու մոդիֆիկացիայի ավտոմեքենաների և մոտոցիկլետների համար կարող են սահմանվել վառելիքի ծախսի ժամանակավոր նորմաներ՝ մեկ տարի ժամկետով: Սույն որոշման համաձայն՝ ԱԻ նախարարի 05.03.2021թ. թիվ 253-Լ հրամանով սահմանվել է վառելիքի ծախսի ժամանակավոր նորմաներ՝ մեկ տարի ժամկետով:

ԱԻ նախարարի 11.09.2019թ. թիվ 960 Լ հրամանով հաստատված «Արտակարգ իրավիճակների նախարարությանը սպասարկող ծառայողական ավտոմեքենաների շահագործման, տեխնիկական սպասարկման և նորոգումների հրահանգով» սահմանվել են Արտակարգ իրավիճակների նախարարությանը սպասարկող ծառայողական ավտոմեքենաների վառելիքի ծախսի նորմերը՝ ՀՀ կառավարության 01.06.2005թ. թիվ 1001-Ն որոշման մեջ չընդգրկված ավտոմեքենաների ժամանակավոր նորմերի համար հիմք ընդունելով այդ մեքենաների տեխնիկական բնութագրերի հանրորեն հասանելի համացանցային տվյալները:

Հաշվեքննողի արձագանք: *Ընդունվել է ի գիտություն, սակայն քանի որ երթուղային թերթերի լրացումը և նշված հրանները իրականացվել է հաշվեքննությունը ներառող ժամանակաշրջանից հետո, դրանք հաշվեքննության արդյունքների վրա չեն ազդել: Ինչ վերաբերվում է վառլիքի ծախսի համար կիրառված «հանրորեն հասանելի համացանցային տվյալները» կիրառելուն, ապա դիրքորոշումը չի ընդունվել և անհրաժեշտ է բացառել նման մոտեցումների կիրառումը:*

ՄԺԾԾ-ով ՓԾ ավտոտրանսպորտային միջոցների ընթացիկ պահպանման ծախսը պլանավորվել է թվով 451 (որից՝ 37-ը Հայ-ռուսական մարդասիրական կենտրոնի) տրանսպորտային միջոցի համար, իսկ վառելիքի ծախսը՝ 503 (որից՝ 49-ը Հայ-ռուսական մարդասիրական կենտրոնի) ավտոտրանսպորտային միջոցի համար: 2020թ. բյուջետային հայտով նախատեսվել է 460 տրանսպորտային միջոց:

Շահագործումից դուրս եկած 174 տրանսպորտային միջոցի համար պահպանման և վառելիքի ծախսեր են պլանավորվել

ԱՊՊԱ պայմանագրերի, երթուղային թերթերի և շահագործման քարտերի համադրության արդյունքում պարզվել է, որ ՓԾ կազմում փաստացի շահագործվել է 306 (ԱԻՆ21, ՓԾ 286) տրանսպորտային միջոց: Մասնավորապես, ԱԻՆ մասով ԱՊՊԱ պայմանգիր է կնքվել թվով 21 մեքենաների համար (745.0 հազ. դրամ) այնինչ

Նախարարությունում հաշվառված է եղել թվով 20-ը, մասնավորապես՝ Audi A6 040vv01 մեքենան ԱԻՆ մեքենաների ցանկում առկա չի եղել, սակայն կնքվել ԱՊՊԱ պայմանագիր: Արդյունքում ՓԾ 174 տրանսպորտային միջոցի համար ՄԺԾԾ-ով և բյուջետային հայտով նախատեսվել են վառելիքի և պահպանման ծախսեր, սակայն այդ մեքենաները չեն շահագործվել:

ԱԻՆ դիրքորոշում:*Audi A6 040 VV 01 մեքենան ներառված է ԱԻ նախարարի 11.09.2019թ. թիվ 960-Ա հրամանով հաստատված Արտակարգ իրավիճակների նախարարությանը սպասարկող ծառայողական ավտոմեքենաների ցանկում: Վերը նշված ավտոմեքենան վերանորոգումից հետո պետք է շահագործվեր, այդ պատճառով էլ նրա համար կնքվել է ԱՊՊԱ պայմանագիր:*

Հաշվեքննողի արձագանք: *Չի ընդունվել, քանի որ 2020թ.մեքենան այդպես էլ չի շահագործվել:*

ԱԻՆ դիրքորոշում 1: *Փրկարար ծառայության 174 տրանսպորտային միջոցների համար ՄԺԾԾ-ով և բյուջետային հայտով վառելիքի, պահպանման ծախսերը ավել են պլանավորվել, քանի որ վերջիններս ՓԾ հաշվեկշռից դուրս գրված չեն և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում դրանց զգալի մասը ենթակա է վերանորոգման և շահագործման: Ընթացիկ տարում Փրկարար ծառայությունում կարող են լինել անկանխատեսելի արտակարգ իրավիճակներ, որոնց արձագանքման ժամանակ կարող են շահագործվել պահեստային տրանսպորտային միջոցներ, ինչի հետևանքով բնականաբար ավելանում է վառելիքի ծախսը:*

ԱԻՆ դիրքորոշում 2: *Նշված որոշմամբ Նախարարության Փրկարար ծառայության համար սահմանվել է 499 ծառայողական ավտոմեքենա, որից 21-ը ԱԻ նախարարի 11.09.2019թ. թիվ 960-Լ հրամանով նախատեսվել է Նախարարության գործառույթների իրականացման ժամանակ աշխատողների կողմից ծառայողական պարտականությունների կատարման տրանսպորտային սպասարկման համար՝ որպես պետական մարմինները սպասարկող ծառայողական ավտոմեքենա:*

Քննարկումների ժամանակ ընդունելով աշխատակազմի ենթակայության տակ գտնվող ավտոմեքենաների հատկացման օրինականությունը, աշխատանքային խումբն առաջարկեց սահմանված կարգով նախաձեռնել ՀՀ կառավարության 17.02.2005թ. թիվ 194-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություն կատարելու վերաբերյալ Կառավարության որոշման նախագիծ ներկայացնելու գործընթաց: Կառավարության որոշման համապատասխան նախագիծը ներկայումս դրված է շրջանառության:

Հաշվեքննողի արձագանք 1: *Չի ընդունվել քանի որ բոլոր 174 տրանսպորտային միջոցները չեն կարող դիտարկվել որպես պահեստային, հատկապես, որ հաշվեքննության ընթացքում արձանագրվել է որ դրանց գերակշիռ մասը ենթակա չէ վերանորոգման առավել ևս հետագա շահագործման:*

Հաշվեքննողի արձագանք 2: *Չի ընդունվել, քանի որ Նախարարությունը և ՓԾ-ն ունեն առանձին հաշվեկշիռներ, հետևաբար մեքենաների ցանկը ևս պետք է լինի առանձնացված Կառավարության համապատասխան որոշմամբ և ոչ թե նախարարի հրամանով: Շրջանառության մեջ դրված նախագծի մասով կիրականացվի հետհսկողություն:*

ՓԾ 255 ավտոմեքենաներում տեղադրված է տեղորոշման GPS համակարգ, որից 99-ը հագեցված է նաև վառելիքի ծախսի վերահսկման (ДУТ) համակարգերով: Հաշվեքննությամբ արձանագրվել է, լրացված երթի ուղեգրերում փաստացի վազքը մի շարք դեպքերում չի համապատասխանել GPS համակարգի միջոցով արձանագրված ճանապարհի ցուցանիշի հետ, իսկ վառելիքի ծախսի վերահսկման (ДУТ) համակարգը լիարժեք չի գործել: Արդյունքում նշված համակարգերը երթի և վառելիքի ծախսերի նկատմամբ հսկողության գործընթացում լիարժեք չեն կիրառվել:

ԱԻՆ դիրքորոշում: *ՓԾ ավտոմեքենաներում տեղադրված վառելիքի ծախսի վերահսկման (ДУТ) համակարգում արձանագրված տվյալների շեղումը թույլատրելի մակարդակից որոշակի գերազանցել է այն դեպքերում, երբ համակարգը նոր է սկսել շահագործվել տվյալ տարածքում, որտեղ տարածաշրջանի ռելիեֆային առանձնահատկություններով պայմանավորված առաջացել են ինտերնետ կապի և GPS տվիչների աշխատանքի խափանումներ:*

Հաշվեքննողի արձագանք: *Չի ընդունվել, քանի որ հաշվեքննողի կողմից արդեն իսկ հաշվի են առնվել համակարգի խափանումներով պայմանավորված շեղումները, իսկ հաշվեքննությամբ արձանագրված շեղումները վեաբերվել են այն ցուցանիշներին որոնց ժամանակ համակարգը լիարժեք աշխատել և ապահովել է տվյալների ամբողջական փոխանցումը:*

5.5 Ներքին գործուղումներ

Պետական բյուջեից Նախարարությանը ներքին գործուղումների համար 2020թ. նախատեսվել է հատկացնել 2,892.7 հազ. դրամ, փաստացի և դրամարկղային ծախսերը կազմել են 2,716.8 հազ. դրամ:

Բացակայել են գործուղման հաշվետվությունները, իսկ վճարումները կատարվել են գործուղումից հետո:

«Փրկարար ծառայության» ծրագրով ներքին գործուղումների համար 2020թ. նախատեսվել է հատկացնել 30,227.9 հազ. դրամ, փաստացի և դրամարկղային ծախսերը կազմել են 29,289.9 հազ. դրամ:

ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշման 9-րդ կետի համաձայն՝ գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում աշխատողը պարտավոր է ներկայացնել գործուղման վկայականը, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը, գործուղման ծախսերը հաստատող փաստաթղթերը: 2020թ. իրականացված բոլոր գործուղումների համար բացակայել է ներկայացված հաշվետվությունը:

Միաժամանակ, Նախարարության կողմից չի պահպանվել նաև վերոնշյալ որոշման 9-րդ կետի առաջին մասով սահմանված պահանջը, որի համաձայն՝ գործուղվող աշխատողին գործուղման ծախսերի հատուցումը տրվում է գործուղում մեկնելուց առնվազն մեկ օր առաջ: Ներքին գործուղումների նպատակով՝ 2020թ. բոլոր վճարումները կատարվել են գործուղումից հետո:

ԱԻՆ դիրքորոշում: *ԱԻՆ աշխատակիցները և ԱԻՆ Փրկարար ծառայության ծառայողները ներկայումս ներկայացնում են ՀՀ կառավարության 29.12.2005թ թիվ 2335-Ն որոշման 9-րդ կետի համաձայն գործուղման վկայականը, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը:*

Հաշվեքննողի արձագանք: *Ընդունվել է ի գիտություն և կիրականացվի հետհսկողություն: Սակայն քանի որ կարգավորումը իրականացվել է հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանից հետո, այն արդյունքների մեջ չի ներառվել:*

Եզրահանգում: Նախարարության կողմից չի պահպանվել ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշման 9-րդ կետի պահանջները, որի հետևանքով առաջացած անհամապատասխանության չափը կազմել է 32,994.7 հազ. դրամ:

5.6 Նախարարության կարիքների համար իրականացված գնումներ

Նախարարության կարիքների համար 2020թ. կնքվել է թվով 184 պայմանագիր՝ 682,104.7 հազ. դրամ արժեքով, փաստացի ծախսը կազմել է 678,494.9 հազ. դրամ:

Էլեկտրոնային եղանակով կազմակերպվող գնումների գործընթաց.

Համաձայն ՀՀ կառավարության 06.04.2017թ. թիվ 386-Ն որոշման, ԱԻՆ կարիքների համար գնման գործընթացը իրականացվել է էլեկտրոնային եղանակով՝ Armeps և PPCM համակարգերի միջոցով: Համաձայն նշված համակարգերի օգագործման ուղեցույցի, գնման ընթացակարգին մասնակցող պաշտոնատար անձն իր գործառնություններն իրականացնում է իր անվանական էջով, որի մուտքը իրականացնում է մուտքանունի և գաղտնաբառի միջոցով:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ թեև գործառնություններ իրականացնող պաշտոնատար անձանց անուններով առկա են եղել անձնական էջեր, սակայն դրանց

բոլորի մուտքանունները և գաղտնաբառերը գտնվել են Գնումների կազմակերպման բաժնում, և բոլոր գործառնություններն իրականացվել են բաժնի աշխատակիցների կողմից՝ այլ անձանց անուններով: Միևնույն ժամանակ, նման աշխատակարգի կազմակերպման համար որևէ ներքին իրավական ակտ առկա չի եղել:

<u>Գնման գործընթացի պլանավորում.</u>

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 17-րդ կետի՝ Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է: Միաժամանակ, նույն որոշման 16-րդ կետի համաձայն՝ Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում:

Գնման ընթացակարգերը կազմակերպվել են առանց հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակելու, իսկ պատասխանատու ստորաբաժանումը սահմանվել է չպահպանելով օրենսդրական պահանջները

Նախարարությունը, չպահպանելով վերոնշյալ որոշման պահանջները, առանց հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակելու, 2020թ. կարիքների համար հայտարարել է վառելիքի, ավտոմեքենաների շարժիչի յուղերի և տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների ձեռքբերման մրցույթներ:

Նախարարության կողմից չի պահպանվել նաև ՀՀ կառավարության 13.04.2017թ. թիվ 390-Ն որոշման պահանջները, և 2020թ. գնումների պլանը հրապարակել է տեղեկագրում՝ հաստատված Նախարարության գլխավոր քարտուղարի ստորագրությամբ, մինչդեռ վերոնշյալ որոշման 5-րդ կետի համաձայն՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվելիք գնումների պլանը հաստատվում է յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումները հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշմամբ՝ առանձին հավելվածով:

ԱԻՆ դիրքորոշում: *Գնումների պլանը հաստատվել է ՀՀ պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումները հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշմամբ՝ առանձին հավելվածով, գնումների պլանում փոփոխություն կատարվել է նույն որոշման հավելված 12-ով սահմանված Կարգի 3 րդ կետի համաձայն:*

Հաշվեքննողի արձագանք: *Չի ընդունվել, քանի որ նախքան վերոնշյալ ընթացակարգերը գնումների պլանը չի հաստատվել և չի հրապարակվել, որից հետո հրապարակվել է գլխավոր քարտուղարի ստորագրությամբ, որից հետո միայն հրապարակվել է ՀՀ պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումները հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման հավելվածով:*

Չի պահպանվել նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 20-րդ կետ պահանջները, համաձայն որի՝ Գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝ պատասխանատու ստորաբաժանում, և գնումները համակարգող, իսկ նույն որոշման 16-րդ կետի համաձայն Գնման պահանջի ծագման օրը գնումների պլանի հրապարակման օրն է:

<u>Գնման ընթացակարգերի փաստաթղթավորում.</u>

Նախարարության գնումների գործընթացի փաստաթղթավորման համապատասխանության գնահատման նպատակով իրականացվել է Գնման

ընթացակարգերի փաթեթների ընտրանքային կարգով հաշվեքննություն, որի մեջ ներառվել են 2020թ. ընթացքում կնքված և գնումների բազային միավորը գերազանցող պայմանագրերի ընթացակարգերը:

Ընտրանքային կարգով ընտրված գնման ընթացակարգերի փաթեթների հաշվեքննությամբ արձանագրվել է, որ փաստաթղթերը հիմնականում համապատասխանել են պետական գնումների ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին, սակայն առկա են եղել որոշ անհամապատասխանություններ.

- Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 31-րդ կետի՝ գնահատող հանձնաժողովի կազմավորմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը հրավիրում է գնահատող հանձնաժողովի առաջին նիստը:

  Ուսումնասիրված բոլոր ընթացակարգերը կազմակերպվել են չպահպանելով վերոնշյալ որոշման 31-րդ կետի պահանջները, իսկ գնահատող հանձնաժողովի առաջին նիստը հրավիրվել է ավելի ուշ:

ԱԻՆ դիրքորոշում: *Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «Անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը», ուստի հարկ եմ համարում նշել, որ հանձնաժողովի կազմավորման օր է համարվում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության Mulberry համակարգով պաշտոնական ծանուցման օրը, որից հետո էլ Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով էլ կատարվել է ժամկետների հաշվարկը:*

Հաշվեքննողի արձագանք: *Չի ընդունվել, քանի որ գնահատող հանձնաժողով սահմանելու մասին հրամանը չի համարվում անհատական իրավական ակտ, իսկ հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և պատասխանատու անձինք պարտավոր են ապահովել դրա կիրարկումը Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:*

- Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 21-րդ կետի 3) ենթակետի՝ Պատասխանատու ստորաբաժանումը ներկայացնում է գնման հայտը, որը պարունակում է գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով առաջադրվող անձանց (թեկնածուների) ցուցակը՝ ըստ հանձնաժողովի կազմում այդ անձանց ընդգրկման առաջնահերթության՝ նշելով հանձնաժողովի նախագահի թեկնածությունը:

  Կազմակերպված բոլոր ընթացակարգերի համար գնման հայտում բացակայել է առաջարկություն գնահատող անձնաց թեկնածության մասին, իսկ թեկնածուների ընդգրկումը գնահտող հանձնաժողովի կազմում իրականացվել է գլխավոր քարտուղարի որոշմամբ և համապատասխան հրամանով:

ԱԻՆ դիրքորոշում: *Գնման հայտով պատասխանատու ստորաբաժանման կողմից հանձնաժողովի կազմի առաջարկության բացթողումն ընդունվել է, խնդիրը շտկվել:*

Հաշվեքննողի արձագանք: *Ընդունվել է ի գիտություն, կիրականացվի հետհսկողություն:*

- Մի շարք դեպքերում որակավորման և պայմանագրի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնագրերի վրա լրացված չեն եղել ամիս ամսաթվերը, վճարման պահանջագրում բացակայել է արժույթը և արժույթի կոդը (որը պետք է հիմք հանդիսանար փաստաթղթի մերժման) և այլն:

<u>Հանձնման-ընդունման գործընթաց.</u>

Պայմանագրերի հանձնման-ընդունման գործընթացը չի իրականացվել էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 110-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվել են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ԱԻՆ-ը, չպահպանելով վերոնշյալ օրենսդրական պահանջը, 2020թ. պայմանագրերի հանձնման-ընդունման գործընթացը չի կազմակերպել էլեկտրոնային համակարգի միջոցով, և էլեկտրոնային գնումների համակարգում բացակայել են պատասխանատու ստորաբաժանման կողմից էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված եզրակացությունները և հանձնման-ընդունման արձանագրությունները: Նախարարությունը չի պահպանել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 110-րդ կետի պահանջները՝ էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով:

Ընթացիկ հսկողության վերաբերյալ.

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ 2020թ. Նախարարության կողմից կազմակերպված գնման գործընթացների նկատմամբ ներքին աուդիտ չի իրականացվել, առկա չի եղել նաև ներքին հսկողական մեխանիզմ կամ դրա սահմանման վերաբերյալ որևէ իրավական ակտ: